# ՀՀ Արմավիրի  մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 5-րդ փողոց 2/22 հողամասում հասարակական նշանակության շինությունների վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն ԼՐԱՄՇԱԿՎԱԾ



«ԷԼԻՏ ՎՈՒԴ» ՍՊԸ տնօրեն՝        Ռազմիկ Եսայան

**ԵՐԵՎԱՆ 2025**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ընդհանուր տեղեկատվություն ........ 4

2.Նախատեսվող գործունեության փորձաքննական գործընթացը ........ 5

3. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը, ........ 5

4. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը. ........ 6

5. Շրջակա միջավայրի բնութագրերը ........ 13

5.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը ........ 13

9.3. Կլիմա և օդային ավազան ........ 14

9.4 Հողային ռեսուրսներ ........ 19

9.5.Ջրային ռեսուրսներ ........ 20

9.6 Կենսաբազմազություն ........ 21

Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային, անապատային և լեռնաիարթավայրային է: Մարզում անտառածածկ տարածքներ գրեթե չկան, անտառապատ տարածքները կազմում են տարածքի 0,1%-ը: ........ 21

9.7 Պատմության և մշակութային հուշարձաններ ........ 24

6. Նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ, արտադրական հզորություններ (շինարարության, շահագործման, փակման փուլեր). ........ 30

8.Ժամանակացույց ........ 34

**Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը (շինարարության և շահագործման, փակման փուլ)** ........ 40

8.1 Օդային ավազան. ........ 40

8.2 Հողային ռեսուրսներ. ........ 49

8.3 Ջրային ռեսուրսներ. ........ 49

8.5 Թափոններ ........ 50

Թափոնների կառավարման համար հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ: ........ 51

8.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ ........ 51

8.7 Աղմուկ և թրթռում ........ 52

8.8 Արտակարգ իրավիճակներ. ........ 53

Արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ: ........ 53

8.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն. ........ 54

8.11 Սոցիալական. ........ 54

8.12 Լանդշաֆտ. 54
9.13 Բարեկարգում և Կանաչապատում. 54
9. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան) 55
9.6 Պատմամշակութային և  բնության հուշարձաններ 58
9.7 Աղմուկ և թրթռում. 59
9.8 Արտակարգ իրավիճակներ. 59
9.9 մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն. 60
9.10 61
9.11 Լանդշաֆտ. շինարարության փուլում 61
9.12. Բարեկարգում և կանաչապատում. 61
10. Մոնիթորինգ 62
11.Բողոքների ընթացակարգ 62
12. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան 64
13.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ 77
15. Հանրային քննարկումներ 81
Գրականություն 85
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 86

## Հավելվածներ

**Հավելված 1.** Տարածքի սեփականության իրավունքի վկայական
**Հավելված 2.** Ճարտարապետա-հատակագծային առաջադրանք
**Հավելված 3.** Հողամասի հատակագիծը՝ WGS-84 (ARMREF 02) կոորդինատային համակարգով,
**Հավելված 4.** Տարածքի հատակագիծ
**Հավելված 5.** ՀԷՑ-ի Էլեկտրամատակարարման տեխնիկական պայման
**Հավելված 6.**  «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայման
**Հավելված 7.** Համայնքի կողմից տրված ավագանու որոշումը
**Հավելված 8.** Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ
**Հավելված 9.** Պետական տուրքի անդորրագիր

## 1.Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| ➢ Հաշվետվություն | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնք, Նորապատ բնակավայրի 5-րդ փողոց 2/22 հողամասում հասարակական նշանակության շինությունների կառուցում |
| ➢ Նախաձեռնող՝ | «Էլիտ Վուդ» ՍՊԸ |
| ➢ Նախաձեռնողի իրավաբանական հասցեն՝ | Արմավիրի մարզ, Նորապատ բնակավայր, 3 փող/35 |
| ➢ Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ՝ | nanoaleks8@gmail.com<br>հեռ. +37498443880 |
| ➢ Նախատեսվող գործունեության վարչական տարածքը, փաստացի գործունեության հասցեն | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնք, Նորապատ բնակավայրի 5-րդ փողոց 2/22 հողամաս |
| ➢ Աշխատանքային նախագծի մշակող՝ | «Երշին նախագիծ»ՍՊԸ |

## 2.Նախատեսվող գործունեության փորձաքննական գործընթացը

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին /Փոփոխությունները 2023թ/Օրենքի(այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեությունները համաձայն Օրենքի դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Հաշվետվությունում նախատեսված գործունեությունը ենթակա է փորձաքննության՝ համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի, Քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով»: Նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Գնահատման հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

Գնահատման հաշվետվությունը կազմվել է համաձայն Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան:

## 3. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը, Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը.

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Էլիտ Վուդ»ՍՊԸ-ի կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ Արմավիրի մարզ, Նորապատ բնակավայր, 3 փող/35: Գործունեությունը նախատեսվում է իրականացնել Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական շրջանում՝ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնք, Նորապատ բնակավայրի 5-րդ փողոց 2/22 հողամաս՝ 4325մ$^2$ տարածքի վրա:

Շենքի նախագծման համար հիմք են հանդիսացել.

- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ հավելված 1:
- Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի կողմից տրված նախագծման թույլտվությունը (Ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ N36, 19.04.2022)՝ հավելված 2:

• Շենքի կառուցման նախագծային փաստաթղթերը:

**Նախատեսվող գործունեության նպատակը:** Նախատեսվում է վերակառուցել գոյություն ունեցող շինությունները որպես հասարակական նշանակության պահեստային շինություններ, առաջինը որպես բաց պահեստ, երկրորդ փակ՝ շինանյութի վաճառքի և պահեստավորման նպատակով: Նախկինում տարածքում եղել են երկու կիսակառույց շինություններ, իսկ տարածքն օգտագործվել է որպես բաց պահեստ:

Շենքի կառուցումը կատարվելու է ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն» և ՀՀՇՆ1-4.02-99 նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

## 4. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը.

Ենթակա տարածք. Գործունեության տարածքը գտնվում են Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի վարչական շրջանում: Տարածքի ընդհանուր մակերեսը 0,4325հա է: Տարածքը նախկինում և այժմ գտնվում է մարդածին ազդեցությունների գոտում: Նախկինում տարածքն օգտագործվել է որպես բաց պահեստ, տարածքում առկա է երկու կիսակառույց շինություն, որոնք նախատեսվում է վերակառուցել որպես մեկ բաց պահեստայի և մեկ փակ պահեստային շինություններ:

Հարակից տարածքում առկա են բոլոր ենթակառուցվածքները՝ ճանապարհներ, ինչպես նաև էներգամատակարարման, ջրամատակարարման համակարգերը:

Անմիջապես գործունեության տարածքում բացակայում են ծառերը, առկա է անկանոն աճած բուսածածկ: Անմիջապես հարող տարածքում առկա են ծառեր, որոնք որևէ ազդեցության չեն ենթարկվի գործունեության իրականացման ընթացքում:

Գործունեության ենթակա տարածքի իրադրության սխեման

Հատակագիծ 1

# ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ Մ 1:2000




| | | | | |
|---|---|---|---|---|
| ՕԲՅԵԿՏԻ ՀԱՍՑԵՆ՝ [illegible] | | | ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ [illegible] | ՓՈՒԼ |
| ՍՊԸ ՏՆՕՐԵՆ | [illegible] | "ԷՐԵԲՈՒՆԻ ՆԱԽԱԳԻԾ" ՍՊԸ | ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ [illegible] | ՍԱՍ |
| ԳԼԽ. ՃԱՐՏԱՐԱԳԵՏ | [illegible] | | | ԹԵՐԹԵՐ 18 / ԹԵՐԹ 2 |
| ԳԼԽ. ՃԱՐՏԱՐԱԳԵՏ | [illegible] | | ԹԵՐԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ | |
| ՃԱՐՏԱՐԱԳԵՏ | | | | ՄԱՍՇՏԱԲ 1:1000 |

Նկար 1



Գործունեության հարակից տարածքին կից գտնվում է Մ-5 Երևան-Արմավիր մայրուղին/դանդաղեցման գոտին/, դաշտամիջյան ճանապարհներ, 20մ գյուղ.նշանակության հողատարածքներ:

Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ հեռավորության վրա գտնվում են բնակելի կամ հասրակական շենքեր՝ 31մետր և 69.2 ամենամոտ հեռավորության վրա:

Նկար 2






Համաձայն կատարված հետազոտության տարածքը գտնվում է մարզկենտրոնից 1կմ հարավ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 855մ: Հարթավայրի այդ մասը ներկայացնում է նախալեռնաթեքվածքային, թույլ ալիքաձև հարթավայր: Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են դելյուվիալ–պրոլյուվիալ, ալյուվիալ նստվածքները, որոնք ներկայացված են կավավազային գրունտներով:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ իրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ:

Ռելիեֆ և սեյսմիկա. համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ Amax=0,3g և ունի 8-9 բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան:

Գծապատկեր 2.




Տարածքում և հարակից տարածքներում պատմամշակութային, բնության հուշարձաններ, հատուկ պահպանվող և ընդհանուր օգտագործման տարածքներ, մակերևութային ջրային հոսքեր առկա չեն:

Շինարարության ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում:

## 5. Շրջակա միջավայրի բնութագրերը

### 5.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

9.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

Արմավիրի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևմտյան հատվածում: Այն Հայաստանի ամենաբարձր բնակեցված մարզն է, բայց տարածքով՝ ամենափոքր: Մարզը զբաղեցնում է 1231 կմ$^2$ տարածք, ՀՀ տարածքի 4.1 %-ը, իր մեջ ընդգրկում է Արմավիրի, Էջմիածնի և Բաղրամյանի տարածաշրջանները: Մարզկենտրոնը Արամավիր քաղաքն է:

Նկար 2



Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Արագածոտնի մարզին, արևելքից՝ մայրաքաղաքին, հարավ-արևելքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ պետական սահմանով, սահմանակից է Թուրքիային: Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող ավտոխճուղիներ՝ Երևան-Արմավիր, Երևան-Քարակերտ և Երևան-Գյումրի, ինչպես նաև Երևան-Թբիլիսի երկաթուղին: Մարզում է գտնվում Արաքս գետի միջին հոսանքում կառուցված առայժմ միակ ավտոճանապարհային կամուրջը (Մարգարա գյուղի մոտ), որը հանրապետությունը միացնում է Թուրքիային:

Այն զբաղեցնում է Արարատյան ֆիզիկա-աշխարհագրական շրջանի հյուսիս-արևմտյան մասը (800-1000մ բացարձակ բարձրությունները)՝ հյուսիս–արևմուտքից հարավ-արևելք ընդհանուր թեքությամբ ընդգրկում է Արարատյան գոգավորության հյուսիս-արևմտյան, Արաքսի ձախափնյա մասերը և Արագած լեռնազանգվածի հարավ-արևմտյան նախալեռնային ստորոտները: Մարզի ռելիեֆը տափարակ, գետալճային, չոր նստվածքներից կազմված, տեղ-տեղ ալիքավոր մակերևույթով տարածք է:

Լանդշաֆտային գոտին կիսաանապատային է՝ անապատային տեղամասերով: Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենային և պլեյստոցենային, ստորին-վերին չորրորդական բազալտները, տուֆերը և

տուֆաբրեկչիաները, լճա-ալուվիալ նստվածքները, որոնք ծածկված են ավելի երիտասարդ ալյուվիալ-պրոլյուվիալ-դելյուվիալային նստվածքներով, հիմնականում կավավազներ, ավազակավեր, ավազներ, կոպճա-մանրախճային նստվածքներ: Տարածաշրջանում արմատական ապարներից տարածված են բազալտները և տուֆերը:

ՀՀ Արմավիրի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում ռելիեֆը հարթ է, բացարձակ նիշերը տատանվում 860,6-862,9 մ սահմաններում:

### 9.2. Սեյսմիկա և երկրաբանություն

ՀՀ Արմավիրի մարզի գրեթե ամբողջ տարածքը սեյսմատեկտոնական տեսանկյունից գտնվում է համեմատաբար բարենպաստ պայմաններում: Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի՝ ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ Amax=0,3g: Ըստ երկրաֆիզիկական համալիր հետազոտությունների արդյունքների՝ ուսումնասիրվող տարածքի գրունտներն՝ ըստ սեյսմիկ հատկությունների երկրորդ կարգի են:




### 9.3. Կլիմա և օդային ավազան.

Արմավիրի մարզը ծովի մակարդակից տատանվում է 800-1000մ բարձրությունների վրա, իսկ Արմավիր քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 870 մ բարձրության վրա:

Կլիման խիստ ցամաքային է: Մթնոլորտային տեղումների քանակը չի գերազանցում 254մմ: Ամառը շոգ է, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 41.5°C, ձմռանը ցուրտ է, բացարձակ նվազագույնը՝ -31. 4°C: Ձմռան տևողությունը կազմում է 72 օր: Միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 60%: Բնորոշ են միջին ամսական արագությունը հունվար ամսին կազմում է 0,5 մ/վրկ, հուլիսին՝ 1. 1 մ/վրկ: Գրունտի սառչման խորությունը կազմում է 70 սմ:

Մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներ են հանդիսանում արտադրական ձեռնարկությունները, ավտոտրանսպորտի և էներգետիկայի օբյեկտները:

Նկար 4




Գործունեության տարածքի Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ համայնքի համար, որպես խոշորացված համայնք:

Աղյուսակ 1.

Օդի միջին ջերմաստիճանը, $^{0}$C.

**ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,**

**ՁՄՌԱՆ ՍԿԻԶԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Աղյուսակ 1 **Օդի միջին ջերմաստիճան**

| Բնակավայրի անվանումը | | Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C | | | | | | | | | | | | Միջին տարեկան, °C | Բացարձակ նվազագույն, °C | Բացարձակ առավելագույն, °C |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 6. | Արմավիր | -4.1 | -1.3 | 5.4 | 12.5 | 17.4 | 21.9 | 25.8 | 25.3 | 20.2 | 13.0 | 5.7 | -0.8 | 11.8 | -31.4 | 41.5 |

Օդի հարաբերական խոնավությունը (%) Աղյուսակ 2

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 **Օդի հարաբերական խոնավությունը**

| Բնակավայրի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը, % | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | | Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 6. Արմավիր | 75 | 70 | 62 | 56 | 56 | 50 | 46 | 47 | 51 | 61 | 70 | 76 | 60 | 75 | 60 | 46 | 30 |

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Աղյուսակ 3.

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 **Մթնոլորտային տեղումները**

| Բնակավայրի անվանումը | Տեղումների քանակը (միջին ամսական / օրական առավելագույն), մմ | | | | | | | | | | | | | Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ | Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Տարեկան | | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 6. Արմավիր | 18 | 18 | 23 | 33 | 43 | 24 | 13 | 9 | 11 | 25 | 20 | 17 | 254 | 96 | 158 |
| | 19 | 21 | 26 | 30 | 47 | 21 | 38 | 31 | 35 | 30 | 28 | 20 | 47 | | |

## Քամի

Աղյուսակ 4.

Աղյուսակ 15 **Քամի** (արդիականացման ենթակա)

| Բնակավայրի անվանումը | Ամիսներ | Կրկնելիությունը, % / Միջին արագությունը, մ/վ ըստ ուղղությունների: Հյուսիսային | Հյուսիս-արևելյան | Արևելյան | Հարավ- արևելյան | Հարավային | Հարավ-արևմտյան | Արևմտյան | Հյուսիս-արևմտյան | Անդորրի կրկնելիությունը, % | Միջին ամսական արագությունը, մ/վ | Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին | Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ | Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին | Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 7. Արմավիր | հունվար | 7 | 5 | 17 | 8 | 9 | 8 | 28 | 18 | 77 | 0.5 | Արլ | 1.9 | ՀսԱրմ | 2.8 |
| | | 2.2 | 2.2 | 1.9 | 1.9 | 1.8 | 2.3 | 2.5 | 2.8 | | | | | | |
| | ապրիլ | 5 | 7 | 28 | 11 | 9 | 9 | 20 | 11 | 52 | 1.3 | | | | |
| | | 2.8 | 3.4 | 2.5 | 2.7 | 2.7 | 3.7 | 3.0 | 3.7 | | | | | | |
| | հուլիս | 3 | 8 | 31 | 16 | 11 | 7 | 16 | 8 | 55 | 1.1 | | | | |
| | | 2.1 | 2.5 | 1.9 | 2.2 | 1.1 | 2.6 | 2.7 | 2.6 | | | | | | |
| | հոկտեմբեր | 5 | 4 | 23 | 16 | 9 | 7 | 22 | 14 | 72 | 0.6 | | | | |
| | | 2.2 | 2.8 | 1.9 | 2.9 | 2.8 | 3.6 | 3.1 | 3.8 | | | | | | |

Նկար 5

Greenlife
<<ԳՐԻՆ ԼԱՅՖ>>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ




**Օդային ավազան.** Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Հայաստանի հանրապետությունում օդային ավազանի դիտարկումներ են կատարվում շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ հանրապետության տարածքի 45 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայաններում:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի **«Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումներ»-ի** բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների (հնգամյա միջին) մինչև 10 000 բնակիչ ունեցող բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Նորապատ բնակավայրը օդի աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ$^3$
- Ծծմբի երկօքսիդ **($SO_2$)՝** 0,006 մգ/մ$^3$
- Ազոտի երկօքսիդ **($NO_2$)՝** 0,023մգ/մ$^3$
- Ածխածնի օքսիդ **(CO)՝** 0.8 մգ/մ$^3$

### 9.4 Հողային ռեսուրսներ

Արմավիրի մարզի լանդշաֆտը ցածրադիր մասերում կիսաանապատային է, նախալեռնային շրջաններում՝ խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը, կան նաև անապատային տեղամասեր:

Արաքսի և նրա վտակների փուխր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները: Լճային նստվածքների հզորությունը հասնում է մի քանի տասնյակ մետրի:

Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են նաև բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում ոռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալած հողեր՝ ալկալահողերը: Տեղ-տեղ երևում են թաքիրներ՝ դեղնա-սպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փուխր նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

ՀՀ Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան դաշտի բարեբեր հողերի վրա: Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 97 076.1 հա կամ մարզի վարչական տարածքի 78.2%-ը, գյուղատնտեսական նշանակության հողերի 63.5%-ը ոռոգելի հողեր են, չմշակվող հողերը կազմում են 13 207.95 հա, որից աղակալած է 2 986 հա:




Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես պտղաբուծության(ելակ, ծիրան, խաղող), բանջար-բոստանային մշակաբույսների արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության համար:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Համաձայն Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. տեղեկագրերում Արմավիրի մարզի բնակավայրերի ծանր մետաղներով հողային ծածկույթի աղտոտվածության ուսումնասիրման դիտարկումները բացակայում են:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է երկար տարիներ գործող կառուցապատված և ասֆալտապատված տարածքում, որով էլ պայմանավորված է հողաբուսաշերտի բացակայությունը:

### 9.5.Ջրային ռեսուրսներ

ՀՀ Արմավիրի մարզն առանձնապես հարուստ չէ ջրային ռեսուրսներով: Արմավիր և քաղաքը գտնվում է Ախուրյան ջրավազանային կառավարման տարածքում:

Արմավիրի մարզի գետերը պատկանում են Արաքս գետի ավազանին: Մարզի ջրային ռեսուրսները ձևավորվում են 4 գետերով, տարածքով են հոսում՝ Արաքս, Հրազդան, Ազատ, Վեդի խոշոր գետերը, համեմատաբար փոքր գետերից՝ Արածոն, Չորասու հեղեղատարը, Ազատի ու Վեդի գետերի վտակները՝ Քաջառուն, Խոսրովը, և այլն: Արարատյան հարթավայրով անցնող գետերը ունեն ոռոգիչ նշանակություն:

Մարզում է գտնվում հանրապետության ամենացածրադիր լիճը՝ Այղր (Ակնա) լիճը,

որը զբաղեցնում է 50 հեկտար մակերես, ունի 2 մետր խորություն, ձագարաձև ուրվագիծ և ստորերկրյա սնում: Միակ գետը, որ սկսվում է մարզի սահմաններում Մեծամորն է (Սևջուրը), որը սկիզբ է առնում Այղր լճից: Մեծամորի միակ խոշոր վտակը Քասախն է: Թուրքիայի հետ սահմանն անցնում է Արաքս գետով: Ռեսուրսների պակասը հիմնականում լրացվում է ստորգետնյա ջրային ռեսուրսներով:

Գործում են Ստորին Հրազդանի, Էջմիածնի, Մեծամորի և այլ ջրանցքներ:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանը գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Ստորերկրյա ջրերի սնուցումը իրականացվում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումնային հորիզոնը տեղադրված է 150-200մ հասնող հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք): Քաղաքի և շրջանի տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր, որոնք սնվում են մակերևութային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Գրունտային ջրերը առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝ օգոստոս-նոյեմբեր ամիսներին:

Գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրերը բացակայում են:

Ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ-կենցաղային, սննդի արդյունաբերության, հանքարդյունաբերության և գյուղատնտեսության կեղտաջրերը: Ջրային ռեսուրսների որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման համաձայն, գնահատվելով «միջակից» «վատ» է (3-5րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ դիտացանցերի միջոցով: 2024 թվականի 4-րդ եռամսյակի տեղեկագրի՝ Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ և հարավ-արևելք հատվածներում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Գործունեության տարածքում մակերևութային ջրերը բացակայում են:

### 9.6 Կենսաբազմազություն

Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային, անապատային և լեռնահարթավայրային է: Մարզում անտառածածկ տարածքներ գրեթե չկան, անտառապատ տարածքները կազմում են տարածքի 0,1%-ը:




Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային և լեռնատափաստանային է: Մարզում անտառածածկ տարածքներ չկան: Տարածքին բնորոշ են չորասեր ու աղասեր բույսերը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության Կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարության և գործողությունների պետական ծրագրի» Արմավիրի մարզի տարածքում ՀՀ Կարմիր գրքում ներառված 24 բուսատեսակ և 86 կենդանատեսակ գտնվում են անհետացման եզրին:

Բուսական աշխարհ. մարզի տարածքը գտնվում է Երևանի և Արագածի ֆլորիստիկ շրջաններում, որոնց համար տիպիկ են Հայաստանի ֆլորայի 170-ից ավելի հազվագյուտ և անհետացող և 50-ից ավելի էնդիմիկ տեսակներ: Գերակշռում են կիսաանապատային չորասեր բուսատեսակները, իսկ ցածրադիր, ճահճապատ տարածություններում՝ եղեգնի մացառուտները: Տարածաշրջանում գրանցված են մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես դոմինանտ կարելի է նշել հովվափողազգիներից (Alismataceae)՝ հովվափող լանցետային (Alisma lanceolatum), սովորական նետախոտը (Sagittaria sagittifolia L.), եռատերև նետախոտը (Sagittaria trifolia L.), հովանոցազգիներից՝ ակտոնոլեմ խոշորաբաժակը (Actinolema macrolema), աննշմարակող անհարթապտուղը (Aphanopleura trachisperma), երնջակ Վանատուրի (Eringium vanaturii), աստղածաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (Amberboa moschata), խոզանափուշ բարակը (Caucinia tenella), կանգար տուրնեֆորի (Gundelia tournefortii), կաթնուկ Թախտաջյանի (Lactuca takhtadzhianii), խաչածաղկավորներից՝ լոջուն թռչնակտուց (Isatis ornitorhynchus),

ցախակեռասազգիներից՝ կտտենի, թանթրվենի Տիգրանի (Sambucus tigranii), մեխակազգիներից՝ փշատերևուկ ծակող (Acanthophyllum pungens), ալոխրուլա բունգեի (Allochrusa bungei), մեխակ Լիբանանի (Dianthus libanotis), թելուկազգիներից՝ բիեներցիա շուրջաթև (Bienertia cycloptera), օշան Թամամշյանի (Salsola tamamschjanae), սպանախ քառաեզ (Spinacia tetrandra), լոբազգիներից՝ գազ տարօրինակ (Astragalus paradoxus), հացհամեմ գլխիկավոր (Trigonella capitata), ֆրանկենազգիներից՝ ֆրանկենիա փոշապատ (Frankenia pulverulenta), բորակաթուփազգիներից՝ բորակաթուփ շոբերի (Nitraria schoberi), հացազգիներից՝ այծակն հաստ (Aegilops crassa), ցորեն արարատյան (Tritiucum araraicum), կարմրանազգիներից՝ կարմրան (Tamarix), կարմրան ութառեզանի (Tamarix octandra), զուգատերևազգիներից՝ տետրադիկլիս բարալիկ (Tetradiclis tanella) և այլն:

Արմավիրի մարզում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված է 26 տեսակներ:

Հայաստանի բույսերի կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող տեսակներից մարզի տարածաշրջանում հանդիպում են աղուտների և կիսաանապատային բուսականության հետևյալ ներկայացուցիչները, մասնավորեն՝ խնկեղեգ ճահճային(Acorus calamus L.), Շտերնբերգիա շնդեղածաղկային(Sternbergia colchiciflora Waldst. et Kit), Ակտինոլեմ խոշաբաժակ (Actinolema macrolema Boiss), Երնջակ Վանատուրի (Eryngium wanaturii Woronow), Վարդատերեփուկ Իլյինի (Amberboa iljiniana Grossh) և այլն:



Նկար 6. Շտերնբերգիա շնդեղածաղկային



Նկար 7. Ակտինոլեմ խոշաբաժակ

Կենդանական աշխարհ. կենդանական աշխարհը հարուստ է կաթնասուններով, թռչուններով, կրծողներով, սողուններով, խխունջներով և այլն: Հանդիպում են հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Տարածաշրջանում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որոնցից 28 տեսակը կաթնասուն է, 67-ը՝ թռչուն, 15-ը՝ սողուն և 3-ը՝ երկկենցաղ: Տարածաշրջանում դոմինանտ և բնորոշ տեսակներից են Հայաստանում ամենուրեք տարածված Crocidura (սպիտակատամիկ), Vulpes vulpes L. (աղվե ս), Cricetus auratus Nat. (գերմանամուկ), Mucrotus arvalis Pall. (դաշտամուկ), Perdix perdix L.(կաքավ), Grus grus L. (կռունկ) և այլն: Տարածաշրջանին բնորոշ ողնաշարավոր տարածքված կենդանիներից են՝ գայլը, աքիսը, եղեգնակատուն, ջրասամույրը, աղվեսը, կռնչան բադը, ճահճակուղբը, լճագորտը, մոխրագույն առնետը ժայռային մողեսը, սողուններից՝ սովորական լորտուն և միջատները: Անողնաշարավոր կենդանիներից հանդիպում են ծովախեցգետինը, մրջյունը, մեղուն, ճռիկը, մորեխը, կաղամբաթիթեռը և այլն: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ

տեսակներով՝ տնային ճնճղուկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը և այլն: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանի կիսաանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և ղրիմյան ծագում ունեցողները: Աղուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (Porphirophora hamelii) գոյությունը:

Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանիներից է՝ հայկական որորը (Larus armeniacus But.), Մեղու Դեսպտորիա( Megachile deseptoria Peres): Տարածաշրջանում հանդիպող ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանիների տեսակներից հանդիպում են, մասնակիորեն՝ հարավային պայտաքիթը 30 (Rhinolophuseuryales), վարդագույն հավալուսն(Pelecanus onocrotalus), քաջահավ (Plagadis falcinellus Linneaus), փոքր ձկնկուլ(Phalocrocorax pygmaeug Linneaus), Ուբադչի ճպուռ (Gomphus ubadschii Schmidt), Սատունինի սկոտոդրիմադուզա(Scotodrymadusa satunini), Հայկական բնդեռնիկ (Glaphyrus calvaster Zaitzev), Սև անգղ(Aegipus monachus), Տափաստանային մկնաճուռակ(Circus macrourus), Տափաստանային մկնաճուռակ (Glareola nordmanni), Սատունինի սկոտոդրմադուգա(Scotodrymadusa satunini) և այլն:

Որդան կարմիր միջատը (Porphirophora hamelii) համարվում է հազվագյուտ և անհետացող միջատ և ընգրկված է ՀՀ կարմիր գրքում:



Նկար 8.Արարատյան որդան

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների և բուսատեսակների հանդիպելը գրեթե բացառվում է:

### 9.7 Պատմության և մշակության հուշարձաններ

Արմավիրի մարզն ունի զբոսաշրջային մեծ ներուժ՝ իր հարուստ պատմության և մշակույթի հուշարձաններով: Այստեղ հաշվառված է 430 հուշարձան: Եզակի են նեոլիթյան բնակատեղին (մ.թ.ա VIII-V հազարամյակներ՝ Արատաշեն գյուղ), Մեծամորի հինգհազարամյա հնության (բրոնզեդարյան) մետաղաձուլարանը, նեոլիթ-էնեոլիթյան (Թեղուտ), վաղբրոնզեդարյան (Մոխրաբլուր), բրոնզեդարյան (Մեծամոր), ուրարտական (Արագած), հելլենիստական (Փարաքար) ժամանակաշրջանների կառույցներ ու բնակատեղիները: Արաքս գետի նախկին հունի ձախ ափին գտնվել է հայոց նախկին մայրաքաղաքը՝ Արմավիրը: Արաքսի ու Ախուրյանի միախառնման տեղում նշմարվում են Երվանդաշատի փլատակները:

Այստեղ են նաև սբ. Էջմիածին Մայր Տաճարն իր Գանձատնով, Մեծամորի և Զվարթնոցի հնագիտական թանգարանները, Հայաստանի Ազգագրական պետական թանգարանը Սարդարապատում, Հայաստանի ստորերկրյա ջրերի ամենամեծ ելքը՝ Այղր լիճը, Մուսալեռ և Սարդարապատ հուշահամալիրները:

Դրանք են հնագույն բնակատեղիներ, քարեդարյան կացարաններ, միջնադարյան գյուղատեղիներ, պաշտպանական, հոգևոր, տնտեսական կառույցներ, գերեզմանոցներ, կոթողներ և խաչքարեր և այլն: Ժամանակագրական առումով նրանք ընդգրկում են վաղնջական ժամանակներից մինչև մեր ժամանակները:

Համաձայն ՀՀ Կառավարության 2007թ. մարտի 15-ի «Հայաստանի հանրապետության Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա Պատմության և Մշակույթի անշարժ հուշարձջանների» N 385-Ն որոշման հավելված 4-ի՝ Արմավիր քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում ներառված է 1 հուշարձան):

**ԱՐՄԱՎԻՐ (ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ) քաղաք**

Աղյուսակ 5

| Հուշարձանի համարը | Հուշարձանի ենթահամարը (ենթահամարները) | | Հուշարձանախումբը, հուշարձանը | Ժամանակը | Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն | (հանրապետական, տեղական) | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | | | ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ | | քաղաքային զբոսայգում | Տ | 1 |

<<ԳՐԻՆ ԼԱՅՖ>>

**Բնության հուշարձաններ**. ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն Արմավիրի մարզում առկա են հետևյալ բնության հուշարձաններ

Աղյուսակ 6.

| | | |
|---|---|---|
| 1 | ջրագրական հուշարձան «Մեծամոր» լիճ, | Տարոնիկ գյուղից մոտ 3կմ հյուսիս-արևմուտք գտնվող |
| 2 | կենսաբանական հուշարձան՝ «Ավազասեր (պսամոֆիլ) բուսականություն», | ք. Վաղարշապատ, Զվարթնոց տաճարի մոտ |
| 3 | կենսաբանական հուշարձան՝ «Ջրաճահճային բուսականություն» | Մեծամոր լիճ |

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում բնության, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չեն հայտնաբերվել:

Արմավիրի մարզում է գտնվում բնության հատուկ պահպանվող տարածքը՝ Որդան կարմիր արգելավայրը, որը Հայաստանի Հանրապետության 27 արգելավայրերից մեկն է: Գտնվում է ծովի մակարդակից 900-950 մետր բարձրության վրա :

«Որդան Կարմիր» արգելավայրը ստեղծվել է Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Մինիստրների խորհրդի 1987 թվականի փետրվարի 2-ի N61 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի աղուտ հողերի վրա՝ Արազափ և Ջրառատ բնակավայրերի վարչական տարածքում: Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի՝ «ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 830-Ն որոշման՝ զբաղեցնում է 219.85 հա տարածք:

Արգելավայրն ստեղծվել է աղուտներում բնակվող որդան կարմիր էնդեմիկ միջատից և Հայկական լեռնաշխարհում գրեթե 3 հազարամյակ օգտագործվել է որպես կարմիր ներկ: Պահպանության տակ են որդան կարմիրը և նրա հիմնական կերաբույսերը՝ աղադիմացկուն որդանխոտը և հարավային եղեգը:

Աղյուսակ 7.

| | | | |
|---|---|---|---|
| Արմավիրի մարզ | «Որդան կարմիր» պետական արգելավայր | 21985քկմ | 1987 |
| |  | | |

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները: Գործունեության տարածքը արգելավայրից գտնվում է մոտ 30 կմ հեռավորության վրա:

**9.9 Սոցիալ-տնտեսական.**

Արմավիրի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևմտյան հատվածում: Մարզը հյուսիսից սահմանակից է Արագածոտնի մարզին, արևելքից՝ մայրաքաղաք Երևանին, հարավ-արևելքից՝ Արարատի մարզին և արևմուտքից՝ պետական սահմանով՝Թուրքիային: Արմավիրի մարզը տարածքով ամենափոքր, սակայն

խիտ բնակեցված և բնակչության թվաքանակով ամենամեծ մարզն է ՀՀ-ում: ՀՀ Արմավիրի մարզըի տարածքի մակերեսը կազմում է 1231կմ2: Ներառում է 8 համայնքներ, 3 քաղաք(Արմավիր, Վաղարշապատ (Էջմիածին) և Մեծամոր) և 95 գյուղեր: Բնակչության թվաքանակը 2024թ. տարեսկզբի դրությամբ կազմում է 259. 7 հազար մարդ:

| | |
|---|---|
| Տարածքը<br>Territory | 1 231 քառ. կմ/<br>sq. km |
| ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, %<br>Territory share of the marz in the territory of the RA, % | 4.1 |
| Համայնքներ, 2024թ. տարեսկզբի դրությամբ<br>Communities, as of the beginning of 2024 | 8 |
| Քաղաքներ<br>Towns | 3 |
| Գյուղեր<br>Villages | 95 |
| Բնակչության թվաքանակը 2024թ. տարեսկզբի դրությամբ<br>Population number as of the beginning of the year, 2024 | 259.7 հազ. մարդ/<br>ths. person |
| *այդ թվում՝*<br>*including:* | |
| քաղաքային<br>urban | 83.7 հազ. մարդ/<br>ths. Person |
| գյուղական<br>rural | 176.0 հազ. մարդ/<br>ths. Person |
| ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2023թ.,%<br>Share of marz population in the total population of the RA 2023, % | 8.7 |
| Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2023թ.,%<br>Share of urban population size 2023, % | 32.2 |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր<br>Agricultural land | 96 784.8 հա/<br>ha |
| այդ թվում՝ վարելահողեր<br>including: arable land | 39 333.7 հա/<br>ha |

Համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքի՝ մարզում 2024թ. ՀՀ Արմավիրի մարզի բնակչությունը կազմում է հանրապետության բնակչության 8.7%-ը: հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում Արմավիրի տարածաշրջանի բնակչության թիվը կազմում է 32.2%: Մարզի քաղաքային բնակչությունը՝ 3 քաղաքներով, կազմում է 83.7 հազար մարդ, գյուղականը՝ 176,0 հազար մարդ: Բնակչության զբաղվածության ապահովումը մարզի համար կարևոր խնդիր է:

Բնակչությունը միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով՝ 93%, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են եզդիներ՝ 6,6%, ասորիներ՝ 0,1%, քրդեր՝ 0,1%, ռուսներ՝ 0,2%: Մարզը հիմնականում գազիֆիկացված է, իսկ համայնքները կարիք ունեն խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման: Հիմնախնդիր է անտառային տարածքների բացակայությունը, աղակալված, դեգրադացված, էրոզիացված հողերի առկայությունը, ստորգետնյա ջրերի անխնա շահագործումը:

ՀՀ Արմավիրի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 96784,8 հա, որից վարելահողերը՝ 39. 333. 7 հա: Գյուղատնտեսության ոլորտում հիմնականում մշակվում են հացահատիկա-ընդեղենային և բանջարաբոստանային մշակաբույսեր, իսկ բուսաբուծության մեջ՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և բոստանաբուծությունը՝

հացահատիկաընդեղենային և բանջարաբոստանային մշակաբույսեր: Զարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը:

Արմավիրի մարզն հարուստ չէ օգտակար հանածոներով, առկա է 42 հանքավայր: Արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, խմիչքների արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

Համաձայն վիճակագրության ծառայության տվյալների՝ 2023թ.-ին Արմավիրի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 8.

| | |
|---|---|
| Արդյունաբերություն | 5.9% |
| Գյուղատնտեսություն | 21.8% |
| Շինարարություն | 3.6% |
| Մանրածախ առևտուր | 4.0% |
| Ծառայություններ | 1.5% |

Արմավիրի մարզը ՀՀ-ում առանձնանում է իր գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Անասնաբուծության բնագավառում հիմնականում զարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և բոստանաբուծությունը: Հիմնականում մշակվում են հացահատիկաընդեղենային և բանջարաբոստանային մշակաբույսեր: Արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, խմիչքների արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում: Մարզում է գտնվում Հայկական ատոմային էլեկտրակայանը (Մեծամոր քաղաքի մոտակայքում), որը միակն է Հարավային Կովկասում և գտնվում է Երևանից 36 կմ արևմուտք և զբաղեցնում է 300 հա տարածք: Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող ավտոխճուղիներ՝ ԵրևանԱրմավիր, Երևան–Քարակերտ և Երևան–Գյումրի, ինչպես նաև Երևան–Թբիլիսի երկաթուղին: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզում է գտնվում ՀՀ սահմանային անցման կետերից մեկը՝ «Զվարթնոց» օդանավակայանը:

Մարզկենտրոնն Արմավիր քաղաքը գտնվում է Երասխի ձախ ափին, Արարատյան դաշտում՝ Երևան քաղաքից 44 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Որպես բնակավայր հիմնադրվել է 1903 թվականին, իսկ Արմավիր քաղաքը Արմավիրի մարզի վարչական կենտրոնն է 1996 թվականից: 2024թ. տարեսկզբի տվյալներով քաղաքի բնակչությունը կազմում է 28,7 հազ. մարդ: Քաղաքում գործում են գինու և կոնյակի, պահածոների, կաթի և կաթնամթերքի, հացի, գազապարատուրայի, մոլիբդենի հարստացման, հաստոցաշինական, ֆուրնիտուրայի և այլ շինանյութերի, կահույքի արտադրության գործարաններ, փոքր և միջին բիզնեսով զբաղվող արտադրական և սպասարկման ծառայություններ կազմակերպություններ: Արմավիր իրականացնող քաղաքում գործում է խորդենու վերամշակման գործարան, որը միակն է Հայաստանում:

Քաղաքը հանդիսանում է տարածաշրջանի համար առողջապահական կենտրոն: Քաղաքի զարգացմանը խոչընդոտող հիմնական խնդիրներն են՝ գործազրկությունը, աշխատատեղերի, խմելու ջրի ցածր որակը, ոռոգման ջրի բացակայությունը, կեղտաջրերի

հեռացման, բազմաբնակարան շենքերի պահպանության խնդիրը, ներքաղաքային ճանապարհների վատ վիճակը,:

Հանանձայն Արմավիրի համայքապետարանի կայք էջի՝ քաղաքում առկա է 10 միջնակարգ դպրոց, 12 մսուր-մանկապարտեզ, 1 համալսարան, 3 քոլեջ, 1 մարզադաշտ, 3 մարզադպրոց, 2 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 գեղարվեստի դպրոց, շախմատի դպրոց, 5 գրադարան, տպարան, մշակույթի տուն, ռազմա-մարզական վարժարան, գիշերօթիկ դպրոց, 2 հեռուստաընկերություն, կենդանաբուսաբանական այգի, մշակույթի տներ, քաղաքային զբոսայգի, 5 գրադարան:

Այժմ Արմավիրի տարածքը շրջապատված է բազում հնավայրերով, որոնք համարվում են հայկական քաղաքակրթության հիմնական կենտրոնները մասնավորապես մոտակա Մեծամորը, Արմավիրը, Արգիշտիխինիլին և այլն:

**Մեծամոր համայնք.** Մեծամոր համայնքը գտնվում է Արմավիրի մարզի հյուսիսային մասում: Համայնքը հյուսիսից սահմանակից է Արմավիր համայնքին, արևելքից՝ Խոյ և Արաքս համայնքներին, հարավից՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանին, արևմուտքից՝ Բաղրամյան համայնքին:

Մեծամոր համայնքն ունի 80.284 բնակչություն և զբաղեցնում է 32 622,07 հա տարածք: Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքը, «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընգրկում է հետևյալ բնակավայրերը՝ Մեծամոր քաղաքը, Ալաշկերտ, Ակնալիճ, Ամասիա, Այգեշատ, Արազափ, Արգավանդ, Արևիկ, Արմավիր, Արտաշար, Բամբակաշատ, Բերքաշատ, Գետաշեն, Եղեգնուտ, Երասխահուն, Զարթոնք, Հայկավան, Մարգարա, Մրգաշատ, Նալբանդյան, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Նորապատ, Շենավան, Ջանֆիդա, Ջրաշեն, Վարդանաշեն, Տանձուտ, Տարոնիկ, Փշատավան գյուղերը: Համյանքի կենտրոնն է Մեծամոր քաղաքը, տարածքով ամենամեծ բնակավայրը՝ Եղեգնուտն է, ամենափոքրը՝ Ջրաշենը, իսկ բնակչության թվաքանակով ամենամեծ բնակավայրը՝ ք. Մեծամորն է և գ. Մրգաշատը, ամենափոքը՝ գ. Բերքաշատը:

Մեծամոր քաղաքի բնակչությունը 2024թ. տարեսկզբի դրությամբ կազմում է 9. 1 հազար մարդ:

Համայնքը հարուստ է բազմաթիվ պատմամշակութային արժեքներով, մասնավորապես «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանը, Արգիշտիխինիլի քաղաքի փլատակները և այլն: Համայնքում գործում են նաև փոքր և միջին ձեռնարկություններ, գյուղմթերքի վերամշակման, չրերի և պահածոների արտադրամասեր, տուֆի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրեր: Բնակչության հիմնական մասն աշխատում է ՀԱԷԿ-ում, մի մասն էլ կրթության, առողջապահության, սոցիալական սպասարկման, պաշտպանության, առևտրի և սպասարկման ոլորտներում: Գյուղական բնակավայրերում բնակչության մեծամասնությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ, համայնքում զարգացած է այգեգործությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբոստանային կուլտուրայի մշակումը: Համայնքի հիմնախնդիրներից են ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի, ճանապարհների վերանորոգման, խորքային հորերի վերականգնման, փողոցային լուսավորության, ոռոգման ջրի լուծման խնդիրները:

**Նորապատ բնակավայր**. գտնվում է Արմավիրի մարզում՝ մարզկենտորնից 1 կմ հեռավորության, ծովի մակարդակից 855մ բարձրության վրա: 2024թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչությունը կազմում է 2455 մարդ: Բնակչությունը հիմնականում զբաղվում է խաղողագործությամբ և այգեգործությամբ: Գյուղն ունի հանրակրթական դպրոց, նախակրթարան, գրադարան, բուամբուլատորիա, քաղպաշտպանության համար

թաքստոց, թատրոնի շենք: Գործում է հասարակական սննդիմ կետեր, առևտրի օբյեկտներ: Հիմնախնդիրներից է ենթակառուցվածքների, թատրոնի շենքի վերանորոգումը:

## 6. Նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ, արտադրական հզորություններ (շինարարության, շահագործման, փակման փուլեր).

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի՝ 4325մ$^2$ տարածքի վրա: Նախատեսվում է վերակառուցել հասարակական նշանակության երեք շենքեր:



Շինարարության փուլ.

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել.

- հողային աշխատանքներ,
-ե/ն կոնստրուկցիաների իրականացում,
-քարային աշխատանքներ,
-տանիքի աշխատանքներ,
- հարդարման աշխատանքներ և այլն:

**Քանդման աշխատանքներ.** տարածքում շենք-շինությունների քանդման աշխատանքներ չեն կատարվելու:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են շինաղբի տեսքով թափոններ՝ մոտ 75մ$^3$ ծավալով: Շինարարության ընթացքում առաջացած շինաղբը տեսակավորվելու է: Մետաղական մասերը և այլ առանձնացվող թափոնատեսակները տարանջատվելու են, իսկ որոնք որ ենթակա են աղբավայր տանելու տեղափոխվելու են Մեծամորի համայնքապետարանի կողմից նշված վայր (աղբավայր)՝ պայմանագրային

հիմունքներով:

Հողային աշխատանքներ. **Ժամանակացույցով տրված է հողային աշխատանքներ**

Հողային աշխատանքները տևելու է երկու ամիս:

Շինարարությունը կազմակերպվեու է ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներից բխող անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակմամբ, հաշվի առնելով տեղանքի պայմանները:

Շինարարության փուլում շենքի կառուցապատման համար նախատեսվում է շինարարական հրապարակ, որը կազմելու է մոտ 1000քառ.մ, որից 750մ2 շեբենապատ: Շինհրապարակում տեղակայվելու են.

- տեխնիկա տրանսպորտային միջոցներ,
- ժամանակավոր գրասենյակ՝ 1հատ,
- հանդերձարան 1 հատ
- աղբի տարաներ 1 հատ,
- շարժական սանհանգույց(բիոզուգարան)՝ լվացարանով՝ 1 հատ,
- նյութերի պահեստ
- լուսարձակներ 4 հատ,
- հակահրդեհային վահանակ 1 հատ
- շինարարական ավտոտրանսպորտի ելքի լվացման կետեր՝ 1 հատ, շինհրապարակի մուտքի և ելքի մոտ,

Գլխավոր և հարակից փողոցների կողմից տեղադրվելու են անվտանգության նշաններ, լուսարձակներ, և ամբողջությամբ շինհրապարակի սահմանը ցանկապատվելու է 2մ բարձրության ցանկապատով՝ մետաղական կանգնակներով :

Greenlife
<<ԳՐԻՆ ԼԱՅՖ>>

Շինարարական հրապարակ

Գծապատկեր 4.

## ՇԻՆ. ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ Մ1:500




## ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:500



ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| № ըստ | Անվանում | Չափի միավոր | Քան. | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Գրասենյակ | Հատ | 1 | |
| 2 | Հանդերձարան | Հատ | 1 | |
| 3 | [illegible] | | 12 | |
| 4 | Քիմ. զուգարան | Հատ | 1 | |
| 5 | [illegible] | Հատ | 1 | |
| 6 | Լուսարձակներ | Հատ | 4 | -20 |
| 7 | Հակահրդեհ. վահանակ | Հատ | 1 | |

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

"Շինարարության կազմակերպում" բաժինը մշակված է նախագծման տեխնիկական առաջադրանքի հիման վրա համաձայն ՀՀ ՇՆ 3.01.01-09 ընդգրկում է

- բացատրագիր,
- կատարվող աշխատանքների անվտանգության պահպանման հրահանգներ,
- կատարվող աշխատանքների որակային ստուգման հրահանգներ,
- շինարարական հրապարակի գլխավոր հատակագիծ,
- Բաժնի մշակման ժամանակ օգտագործվել են հետևյալ նորմատիվային փաստաթղթերը`

- ՀՀ ՇՆ 3.01.01-09 "Շինարարության կազմակերպում"
- ՍՆԻՊ 1.04.03-85 "Շինարարության տևողության և նախնական նորմեր շենքերի և կառույցների շինարարությունում"
- ՍՆԻՊ III-4-80 "Անվտանգություն տեխնիկական շինարարությունում"
- ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք

Շինարարության փուլում աշխատողների խմելու ջուրը լինելու է բերովի՝ շշերով: Իսկ աշխատողների կոմունալ-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար շինհրապարակում տեղադրվելու են 12 հատ 1,20X1,50 չափերի շարժական սանհագույց (բիոզուգարան): Աշխատանքների ավարտից հետո բիոզուգարաններն ապամոնտաժվելու են: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան լիցենզիա ունեցող մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման հարթակում: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման հարթակի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև արտադրական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային ջրահեռացման ցանցին և ուղղվելու են բիոզուգարան: Անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրցանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 200լ տարողության պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ արտադրական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ և հակահրդեհային անվտանգության միջոցներով, տեղադրվելու է հակահրդեհային վահանակներ՝ 1 հրդեհաշիջման ջրի՝ V=0.2մ$^3$ ծավալի բաքով: Շինհրապարակի մուտքը ապահովվելու է գլխավոր փողոցի կողմից:

Էլեկտրամատակարարում. Շինհրապարակի էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ միացնելով էլեկտրական սպառման համակարգին՝ պայմանագրի հիման վրա: Էլեկտրակայանքների գործարկման թույլտվությունը ստանալուց հետո:

Շինհրապարակը ցանկապատվելու է ցինկապատ թիթեղներով:

Աղբահեռացում- Շինարարության ընթացքում կառաջանա շինաղբ 75մ$^3$ քանակով:

Շինարարության ընթացքում կառաջանա 2400կգ/տարի, իսկ շահագործման փուլում՝ 14400 կգ/տարի կենցաղային աղբ: Շինարարության փուլում տեղադրվելու են 1 հատ 1,5x1,0մ$^3$, շահագործման փուլում՝ 2 հատ 1,5X1,0մ$^3$ տարողության աղբարկղեր:

Շինաղբը և կենցաղային աղբը տեղափոխվելու է Մեծամորի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր ՝ պայմանագրային հիմունքներով:

Բարեկարգում և Կանաչապատում - Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և գոյություն ունեցող կանաչ տարածքների մաքրում, վերականգնում: Բարեկարգման աշխատանքները ներառում են ավազակոպճային աշխատանքներ, բազալտե եզրաքարերի, բետոնե դեկորատիվ սալիկների տեղադրում և բետոնապատում:

Շինարարական աշխատանքներից հետո նախատեսվում է իրականացնելով ծաղիկների ցանքս և գազոնապատում: Վերակառուցման տարածքում կանաչապատ մակերեսը կազմելու է 500քառ.մ.:

## 8.Ժամանակացույց

Շենքերի կառուցման շինարարական աշխատանքները տևելու են 2 տարի (24 ամիս): Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվող աշխատանքները ներառված են ժամանակացույցում:

| | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՄԻՍՆԵՐ | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1-2 | 3-4 | 5-6 | 7-8 | 9-10 | 11-12 | 13-14 | 15-16 | 17-18 | 19-20 | 21-22 | 23-24 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | |
| 2 | ՀԻՄՔԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ | | | | | | | | | | | | |
| 3 | Ե/Բ ԿՈՆՍՏՐ. ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ | | | | | | | | | | | | |
| 4 | ՔԱՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | |
| 5 | ՏԱՆԻՔԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | |
| 6 | ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | |
| 7 | ԻՆԺ. ՑԱՆՑԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ | | | | | | | | | | | | |
| 8 | ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ | | | | | | | | | | | | |

**Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, շինարարական աշխատանքներ.** շինարարության փուլում տեխնիկա-տրանսպորտային միջոցներից օգտագործվելու է.

- ավտոկռունկ
- ինքնաթափ բեռնատար
- միաշերեփ էքսկավատոր
- ավտոբետոնապոմպ
- բետոնախառնիչ և այլն

Տեխնիկա-տրանսպորտային միջոցները կարող են լինել սեփական ընկերությանը կամ կապալառու կազմակերպությանը պատկանող:

**Ենթակառուցվածքներ.** Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող գրունտային ավտոճանապարհից:

**Ջրամատակարարում և ջրահեռացում.** աշխատողների համար խմելու ջուրը մատակարարվելու է պատրաստի վիճակում՝ շշերով:

Կեղտաջրերի հեռացման համար տեղադրվելու է 1 հատ բիոզուգարանը՝ 2*1,5 չափերի

**7. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր և բնառեսուրսներ.**

Շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, իսկ շահագործման փուլում ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով:

**7.1 Ջուր.** շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

Աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար ջուրը լինելու է բերովի՝ պայմանագրային հիմունքներով: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 3 տ տարրողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար: Տեխնիկական ջրի մատակարարաման աղբյուրը կճշտվի համապատասխան թույլտվություններ ստանալուց հետո, շինարարական աշխատանքների սկզբից՝ կապալառու կազմակերպության կողմից: Տեխնիկական ջրի մատակարարումը կատարվելու է համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինհրապարակում ջուրն օգտագործվում է կենցաղային և հրդեհաշիջման նպատակներով, որի սպառման հաշվարկման մեթոդը հիմնված է ըստ СНиП 3.01.01-85. Ընդհանուր գնահատված ջրի սպառում.

որոշվում է բանաձևով:

$Q_{сум} = Q_1 + Q_2 + Q_3$, որտեղ՝

$Q_1$ - ջրի սպառումը արտադրական կարիքների համար;

$Q_2$ - ջրի սպառումը տնտեսական կարիքների համար;

$Q_3$ - հրդեհաշիջման համար ջրի սպառում;

- ***Արտադրության կարիքների համար ջրի սպառման հաշվարկ***

$Q_1 = 1{,}2 \times K_н \times \sum \frac{Q_{ср}}{8 \times 3600}$, լ/վ

որտեղ 1,2 – չհաշվառված ջրի սպառման գործակից,

միջին արտադրության ջրի սպառում մեկ հերթափոխով,

$K_н$ – ջրի անհավասար սպառման գործակիցը հավասար է 1.6-ի,

8 – հերթափոխի ժամերի քանակը:

*Շինարարության ջրի պահանջները մեկ հերթափոխով*

| Սպառող | Մոտավոր սպառում ջուրը ըստ СНиП | Մեկ հերթափոխի ջրի գնահատված սպառումը, լ |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| Բետոնի և երկաթ բետոնի ցայտումը | 200 - 400 լ/խմ (մեկ օր) | 1000 |

$$Q_1 = 1,2 \times 1,6 \times \frac{1000}{8 \times 3600} = 0,07$$ լ/վ

- ***Կենցաղային կարիքների համար ջրի սպառման հաշվարկ***

Տնտեսությունների կարիքները կապված են աշխատանքի ընթացքում աշխատողների և աշխատողների ջրի ապահովման հետ: Կենցաղային կարիքների համար ջրի սպառումը որոշվում է բանաձևով.

$$Q_2 = \frac{q_2 \times n_2 \times K_2}{t_1 \times 3600},$$

որտեղ $n_2$ - ամենաբեռնված հերթափոխով աշխատող մարդկանց թիվը, հավասար է 10 մարդու;
t1 -հերթափոխի տևողությունը, հավասար է 8 ժամվա;
$K_2$ - ջրի սպառման ժամային անհավասարության գործակից (հավասար է 1,5 - 3): Աշխատանքի հատուկ պայմանների համար մենք ընդունում ենք $K_2 = 1,50$;

$q_2$ - կենցաղային և խմելու կարիքների համար ջրի հատուկ սպառում, որը հավասար է q2 = 25 լ / օր:

Ստանում ենք.

$$Q_2 = \frac{25 \times 10 \times 1.50}{8 \times 3600} = 0.013 լ/վ$$

Շենքի հրդեհը մարելու համար ջրի սպառումը q3 = 2.5 լ / վ է ներքին հրդեհային հիդրանտի՝ յուրաքանչյուր ռեակտիվից:
Հրդեհի մարման համար օգտագործվող ներքին հրդեհային հիդրանտների քանակը n = 1:
Շենքի հրդեհը մարելու համար ջրի սպառումն է.

$Q_3 = n * q_3 = 1 * 2.5 = 2.50$ լ / վ:

***Ընդհանուր սպառում `շինհրապարակի կարիքները բավարարելու համար.***

$Qtot = Q_1 + Q_2 + Q_3 = 0,07 + 0,013 + 2.50 = 2.583$ լ / վ:

**Կեղտաջրեր.** Աշխատողների համար նախատեսվում է տեղադրել բիոզուգարան՝ լվացարանով: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Գործունեության իրականացման ժամանակ օգտագործվելու են հետևյալ նյութերը, մասնավորապես.

- երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ

- ավազ, բետոն
- տուֆ
- մետաղական կոնստրուկցիաներ
- ամրանային ձողեր
- Փայտանյութ՝ կլոր հատվածքով
- Պրոֆիլավոր թիթեղներ
- մալուխներ
- բարձրորակ երեսապատման սալիկներ
- ապակի , փայտ
- բարձրորակ ներկ և այլն

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել տուֆե քարերով:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների բետոնալցման համար համապատասխան դասի բետոնը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային հանգույցներում: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով: Նախատեսվում է օգտագործել B20 դասի ծանր g=2300կգ/մ3 ծավալային կշռով բետոն:

Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից: Բետոնի որակը ստուգվելու է շինհրապարակում նախատեսված լաբորատորիայում:

Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում:

Շինարարական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

**Շահագործման փուլ.** կառուցվելու է հասարակական նշանակության երեք շինություններ, որոնց տեխնիկատնտեսական ցուցանիշն են.

Տեխնիկական ցուցանիշները.

- Հողամասի մակերս՝ 4325մ$^2$
- Նախագծվող շենքի մակերեսը՝ 3335.7մ2(77.1%)
    - Շինություն1՝ 1562. 8մ$^2$
    - Շինություն 2,3՝ 1772. 9մ$^2$
- Կառուցապատման խտությունը 1,5
- Կանաչապատման մակերեսը՝ 500. 0մ$^2$/ (11. 5%):

1-ին շինությունն ունենալու է նկուղային հարկ՝ 1562. 8մ$^2$ մակերեսով: Առաջին շինությունը կառուցվելու է ակսած -4. 50 նիշից, զբաղեցնելու է 1562. 8մ$^2$ մակերես, իսկ երկրորդ հարկը՝ 1632. 0մ$^2$ մակերես:

2 և 3-րդ շինությունները կառուցվելու են 0. 00 նիշում, ընդհանուր զբաղեցնելու է 1848. 2մ$^2$ մակերես, որից՝ 1-ին հարկը՝ 1772. 9մ$^2$, 2-րդ հարկը՝ 75. 3մ$^2$ մակերես:

Նախատեսվող շենքերի կոնստրուկտիվ համակարգը լինելու է ե/բ միաձույլ

շրջանակային հիմնակմախքով՝ կրող պատերի օգնությամբ: Շինությունների արտաքին պատերը երեսապատվելու են հավասար սղոցված տուֆաքարերով: Տանիքը լինելու է երկթեք, ջրահեռացումը՝ արտաքին, կազմակերպված:

Շահագործման փուլում տարածքն ապահոված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Շենքի էներգախնայողության և էներգաարդյունավետության նպատակով նախատեսված են միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 12. 04.2018թ N426-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Ջեռուցում և սառնամատակարարում – Ջեռուցումը և սառնամատակարարումը նախատեսված է արտաքին օդի T=-19$^0$C ձմեռային և T=+34,6$^0$C ամառային հաշվարկային ջերմաստիճանների համար: Հասարակական նշանակության ջեռուցումն իրականացվելու է էլեկտրական օդորակիչներով՝ ֆանկոլներով: Այս օդորակիչներն ապահովելու են ինչպես ջերմամատակարարումը, այնպես էլ սառնամատակարարումը: Նման օդորակիչի յուրաքանչյուր բլոկ օդափոխության մակարդակը կազմում է 10 800մ$^3$/ժամ:

Օդափոխություն- շենքում նախատեսվում է իրականացնել ներածող-արտածող, ընդհանուր փոխանակային մեխանիկական օդափոխություն ներածող օդի նախնական տաքացումով կամ հովացումով: Օդի ներածումն իրականացվելու է ՆՀ-1÷ՆՀ-16 համակարգերով: Օդի արտածումն իրականացվելու է ԱՀ-1÷ԱՀ-26 համակարգերով:

Օդափոխությունն իրականացվելու է մանրամասն արված նախագծային փաստաթղթերի հիման վրա, ժամանակակից անաղմուկ սարքավորումներով:

Գազամատակարարումը-գազամատակարարում տարածքում չի նախատեսվում:

Ջրամատակարարում- Նախատեսվում է տաք և սառը ջրամատակարարում, ջրահեռացում: Շենքի ջրամատակարարումն իրականացվելու է 11. 12. 2024թ. «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի համաձայն: (Հավելված 5): Ջրամատակարարումը կատարվելու է տարածքից 450մ հեռավորության վրա գտնվող Նորապատ գյուղի 5-րդ փողոցից d=100մմ տրամագիծ ունեցող ջրագծից: Կառուցել դիտահոր՝ ջրաչափական հանգույցի համար:

Շենք մտնող ջրագիծը մտնելու է DN 100 մետաղական խողովակով, այնուհետև համակարգը բաժանվում է 2 մասի՝ կենցաղային և հակահրդեհային ջրամատակարարում: Կենցաղային ջրամատակարարաման խողովակները նախատեսված են ալյումինե շերտով պոլիպրեպիլենե խողովակներից՝ մեկուսացվելով խողովակաձև մեկուսիչներով: մոնտաժվելու է հատակի միջով:

Հակահրդեհային ջրամատակարարման համար 1-ին շինությունում նախատեսված է ջրի պահուստային ավազան և հակահրդեհային ջրամատակարարաման 1 գործող և 1 պահուստային պոմպակայան՝ ավտոմատ համակարգով: Հակահրդեհային ջրամատակարարաման խողովակները պողպատե են՝ ներկված հակակոռոզիոն ներկով:

Ջրահեռացում- տարածքում բացակայում է կոյուղատարը, ուստի «Վեոլիա Ջուր»ՓԲԸ ընկերությունն առաջարկում է սեփական տարածքում կառուցել հերմետիկ հոր: Շենքից ջրահեռացումը իրականացվելու է ինքնահոս՝ պոլիվենիլքլորիդե Ø110-Ø50 տրամագծով խողովակներով: Հերմետիկ/սեպտիկ հորն իրենից ենթադրում է խճի հիմքով, բետոնային ծածկույթով, սալապատ հատակով ստորգետնյա երկու քառակուսի կառույց՝ 2.0*2.2*2.2մ չափերի: Հորը եզրապատվում է սալերով, դրսից տեղադրվելու է թուջե մտոց, ներսից՝ մետաղական աստիճան մաքրման աշխատանքներ իրականացնելու նպատակով: Հորի ծավալը կազմում է 9.68մ3 յուրաքանչյուրը, ընդհանուր՝ 19.36մ3, ինչը բավարարում է 40 աշխատակիցներին:

Կոյուղու արտահոսքի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

V = N * Q * 3.

որտեղ:

V – կոյուղու ծավալն է (մ³).

N – աշխատակիցների թիվ

Q – օրական ջրի ծախսն է մեկ աշխատակցի հաշվով, որը չի ներառում ցնցուղարաններ (ընդունվում է 50լիտր կամ 0,05 մ³).

3 – գործակից, որը հաշվի է առնում սեպտիկ հորի եռօրյա պաշարը

Հետևաբար.

V = 40*0.05*3 = 6 մ³/օր:

Առաջին հորը 1/ լցվելուց հետո սկսվում է լցվել դեպի երկրորդ հոր՝ ապահովելով բնական նստեցում, երկրորդ խցիկում երկու օրը մեկ տրվում է բիոնյութ, որը ևս մաքրում է արտահոսքը՝ վերացնելով տհաճ հոտը: Այն ամբողջությամբ լցվելուց հետո մասնագիտացված կազմակերպության կողմից, պայմանագրային հիմունքներով կիրականցվի հորի մաքրում:

Հեղեղատար կոյուղի-Տանիքի ջրահեռացման համար նախատեսված են ջրահեռացման ուղղահայաց ջրհորդաններով:

Էլեկտրամատակարարում- շինության էլեկտրամատակարարումն կատարվելու է գոյություն ունցող 380/220վ լարման տրանսֆորմատորային ենթակայանից մալուխով ՝ մուտքային բաշխիչ վահանով, որից հետո շենքի ներսում իրականացվում է էլեկտաէներգիայի բաշխում: Շենքում նախատեսված է հողանցում, որն իրականացվելու է 40*4մմ հատույթով շերտապողպատով՝ եռակցմամբ միացվում է արտաքին հողանցման կոնտուրին: Նախատեսված է պաշտպանական անջատման ավտոմատ սարք:

Լուսավորության ցանցը նախագծված է պղնձե լարերով, որոնոք անցկացվում են պատերով ՝ սվաղի տակ : Էլեկտրամատակարարումը կատարվելու է 400 կՎԱ հզորության լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանից:

Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կկատարվեն համաձայն ПУЭ 6,7 и СП 31-110-2003, СниП 3.05.06-85 պահանջների:

Շահագործման փուլում հասարակական շինության էլեկտրամատակարարումը կատարվելու է «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված լիազորագիր տեղկանքի հիման վրա, կնքելով էլեկտրաէներգիայի սպառման պայմանագիր՝ մինչև 35կՎ լարման:

Հրդեհաշիջման համակարգ. շինություններն ապահովված են լինելու շուրջօրյա աշխատող հակահրդեհային համակարգով: Հակահրդեհային ազդանշանային համակարգը հաշվարկված է շուրջօրյա և անընդմեջ աշխատելու համար, ինչի օգնությամբ ժամանակին կհայտնաբերվի հրդեհի օջախը և կտեղեկացվի անվտանգության ծառայություն և ԱԻՆ ծառայության հեռակառավարման վահանակին: Հակահրդեհային սարքավորումները տեղադրվելու են բոլոր սենյակներում, բացի սանհանգույցներից: Բոլոր սենյակներում և էվակուացիոն ելքերի մոտ տեղադրվելու է ձայնալուսային ազդասարքեր: Նախատեսվում է նաև ОП-4 տիպի կրակմարիչներ:

Հրդեհամարման համար շենքերում նախատեսված են նաև միաշիթ հակահրդեհային արկղեր՝ հրշեջ վահանակներով՝ L=20մ փողրակներով և D=19մմ ծայրափողով:

Առկա է քաղաքաշինության նախարարության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի եզրակացությունը:Հավելված 4:

**Շահագործման փուլում** շենքերի ջրամատակարարման համակարգերը միացվելու է գոյություն ունեցող բնակավայրի ջրամատակարարման ցանցին՝ համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի: Իսկ կեղտաջրերի հեռացման համար

նախատեսվում է սեպտիկ հորի տեղադրում:

**Շահագործման փուլում** հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

**Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը (շինարարության և շահագործման, փակման փուլ)**

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 5-րդ փողոց 2/22 հողամասում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, ինչպես նաև աշխատանքի անվտանգության հետ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Գործունեության իրականացումը առաջացնելու է լանդշաֆտի որոշակի ծանրաբեռնվածություն: Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու:

Շինությունների կառուցումը կատարվելու է ՀՀ գործող շինարարական նորմերին և պահանջներին համապատասխան:

**8.1 Օդային ավազան**.

Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում՝ ծխագազերի և հողային աշխատանքների (փորման, հարթեցման), այլ աշխատանքների, ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Գործունեության իրականացման ընթացքում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմերի սահմաններում: Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ՝ օդի աղտոտվածությունը վերահսկելու նպատակով:

Շինարարության ժամանակ հանվելու է հողային գրունտ: Շինարարության ժամանակ օգտագործվելու է հիմնական շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցներ՝ թվով 12:

**Մթնոլորտ արտանտվող նյութերի հաշվարկ**

Շինարարական տեխնիկայի տեղաշարժը գրունտային ճանապարհով ուղեկցվում է փոշու արտանետմամբ, ինչն առաջանում է անվադողերի և գրունտային մակերեսի շփման արդյունքում, գրունտի, շինանյութերի, շինարարական աղբի տեղափոխման, դատարկման աշխատանքների ժամանակ: Շինհրապարակում անօրգանական փոշու արտանետման առավելագույն սահմանաչափը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q=\frac{C_1xC_2xC_3xK_5xNxLxC_7xq_1}{3600}+C_4xC_5x\ K_5xq_1{}^2\ x\ S\ x\ n,\ գ/վրկ$$

$$M_{տարի}=0.0864*M_{վրկ}*(365-(Tсп+Tд)),\ տ/տարի$$

Որտեղ,

$C_1$ – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռունանկությունը

$C_2$ - գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը

$C_3$ - գործակից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը

$K_5$ - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը

N- ամբողջ տրանսպորտի վազքընթացների թիվն է ժամում

L- մի վազքի միջին երկարությունն է

$C_7$ - գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու բաժնեմասը

$q_1$ -1կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ

$C_4$ - գործակից, որը հաշվի է առնում պլատֆորմի մակերեսի նյութի պրոֆիլը

$C_5$ - գործակից, որը հաշվի է առնում նյութի շրջափչման արագությունը

$K_5$ - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը

$q_1{}^2$ - նյութի փաստացի մակերևույթի միավորից փոշու արտանետումները

S- պլատֆորմայի միջին մակերեսն է ,

n- ավտոմեքենաների թիվն է

Tсп – ձնածածկ օրերի թիվն է

Tд – անձրևային օրերի թիվն է

Աղյուսակ 2.

| Կատարվող աշխատանքի բնույթը | C1 | C2 | C3 | N | L | C7 | q1 | C4 | C5 | K5 | q12 | S | n | M, տ/տարի | Q, գ/վրկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մեքենաների շարժը | 1 | 0.6 | 0.1 | 2 | 0,2 | 0,01 | 1025 | 1,3 | 1.0 | 0,01 | 0,002 | 15 | 13 | 0,037 | 0.005 |
| Գրունտի հանույթը | 1 | 0.6 | 0.1 | 2 | 0,2 | 0,01 | 1025 | 1,3 | 1.0 | 0,01 | 0.002 | 7 | 1 | 0,0013 | 0,00018 |
| Գրունտի հետլիցք | 1 | 0.6 | 0.1 | 2 | 0,2 | 0,01 | 1025 | 1,3 | 1.0 | 0,01 | 0.002 | 7 | 1 | 0,0013 | 0,00018 |

Արտանետումների վերջնական տարբերակը ներկայացվում է Աղյուսակ 3-ում

Աղյուսակ 3.

| Աշխատանքի բնույթը | M, տ/տարի | Q, գ/վրկ |
|---|---|---|
| Մեքենաների շարժը փոշի՝ 70-20% SiO2) | 0,037 | 0.005 |
| Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO2) | 0,0013 | 0,00018 |
| Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO2) | 0,0013 | 0,00018 |
| Արտանետվող փոշու ընդհանուր քանակը | 0,0396 | 0,00536 |

Փորման աշխատանքների իրականացման արդյունքում արտանետվելու է անօրգանական փոշի՝ 20-70% $SiO_2$ պարունակությամբ: Նախատեսվող գործունեության նախագծային

տվյալների համաձայն գրունտի հանույթի համար օգտագործվելու է 1 էքսկավատոր՝ համապատասխանաբար 1մ³ աշխատանքային շերեփի տարողությամբ: Ելնելով գործող մեթոդակարգից՝ արտանետվող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times P_6 \times B_1 \times G \times 10^6}{3600} \text{ գ/վրկ}$$

P1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0,04
P2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02
P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.2
P4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.01
P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5
P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0
B1 - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5
G վերամշակվող գրունտի քանակն ըստ աշխատանքային շերեփի տարողության՝ 9տ/ժ

Այսպիսով,

$$Q = \frac{0{,}04 \times 0{,}02 \times 1{,}2 \times 0{,}01 \times 0{,}5 \times 1 \times 0{,}5 \times 4{,}5 \times 10^6}{3600} = 0{,}003 \text{ գ/վրկ}$$

Մեկանգամյա համախառն արտանետումը (70-20% $SiO_2$).

M=0,0036 x 0,003 x 72 = 0,00078տ/շինժամ

Բեռնման – բեռնաթափման աշխատանքների իրականացման արդյունքում առաջացող փոշու հաշվարկն իրականացվել է գործող մեթոդակարգի համաձայն: Թափքի բեռնաթափման աշխատանքներն իրականացվում են ուղղահայաց՝ առանց թեքի կիրառման: Բեռնաթափվում է գրունտ, ինչից առաջացող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M = \frac{K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_7 \times K_8 \times K_9 \times B \times G \times 10^6}{3600} * (1-\eta), \text{ գ/վրկ}$$

K1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է,
K2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում,
K3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը,
K4 – գործակից, որը հաշվի է առնում տեղի պայմանները, տեղափոխման և փոշեառաջացման պայմանները,
K5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը,
K7 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը,
K8 – ուղղման գործակից տարբեր նյութերի համար՝ կախված ճանկաշերեփի տեսակից
K9 – ավտոինքնաթափի համախառն բեռնաթափման ուղղման գործակից
B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը,
G – նյութի վերամշակման գումարային քանակը 1 ժամվա հաշվով, տ/ժ
η - փոշենստեցման արդյունավետության հարաբերակցությունը մեկ միավորի հաշվով

***Արտանետվող փոշու տարեկան քանակը որոշվում է հետևյալ բանաձևով.***

$$M_{տ} = K_1 \cdot K_2 \cdot K_3 \cdot K_4 \cdot K_5 \cdot K_7 \cdot K_8 \cdot K_9 \cdot B \cdot G_{տ}, \text{ տ/տ}$$

где $G_{год}$ – վերամշակվող նյութի գումարային ծավալն է շինարարության ողջ

ժամանակատվածի համար

Գրունտ

M = 0,05 · 0,03 · 1,2 · 1 · 0,5 · 0,2 · 0.21 · 0,2 · 0,5 · 6 · $10^6$ / 3600 *0,15= 0,000945 գ/վրկ
***Mտ*** = 0,05 · 0,03 · 1,2 · 1 · 0,5 · 0,5 · 0,4 · 0,2 · 0,5 · 422 = 0,0076 տ/տարի

Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի բնութագիրը բեռնման –բեռնաթափման աշխատանքներից

Աղյուսակ 4.

| Արտանետվող նյութ | Առավելագույն միանվագ, գ/վրկ | Տարեկան արտանետում տ/տ |
|---|---|---|
| Անօրգանական փոշի >70% | 0,000945 | 0,0076 |
| Անօրգանական փոշի 20-70% | 0,003 | 0,0106 |

Շինարարության ժամանակ աշխատող դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող ընդհանուր գազերի և վնասակար նյութերի հաշվարկն իրականացվել է համաձայն գործող մեթոդակարգի: Հաշվարկի բանաձևը արտանետվող գազերի ընդհանուր ծավալի համար իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$M' = \frac{G_4 * q_i * n * 10^3}{3600}$$

Որտեղ, $G_4$ – դիզ. վառելիքի ժամային ծախսն է
$q_i$ – i-րդ աղտոտող նյութի սահմանային ցուցիչն է՝ տ/վ
n – շինհրապարակում միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է:
Հետևաբար,

$$M' = \frac{G_4 * q_i * n * 10^3}{3600} = 0.026*0.084*3*10^3/3600=0{,}0018մ^3$$ գազային արտանետման ծավալն է:

Դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող վնասակար նյութերի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$Gi = \sum_{k=1}^{k} (m_{ՍԹԱi} \cdot t_{ՍԹԱ} + 1{,}3 \cdot m_{ՍԹԱik} \cdot t_{ՍԹԱk}) \cdot N_k / 1800,\ г/с$$

где mՍԹԱi – i-րդ նյութի սահմանային արտանետումն է չծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

1,3 · $m_{ՍԹԱik}$ - i-րդ նյութի սահմանային արտանետումն է ծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$t_{ՍԹԱ}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ չծանրաբեռնված ր.

$t_{ՍԹԱk}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝

ծանրաբեռնված ր.

$N_k$ – k-րդ խմբի մեքենաների վ միաժամանակ աշխատող մեքենանեների առավելագույն թիվն է

i-րդ նյութի համախառն արտահանման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$M_i = \sum_{k=1}^{k} \left( m_{\text{ՍԹԱ}i} \cdot t_{\text{ՍԹԱ}} + 1{,}3 \cdot m_{\text{ՍԹԱ}ik} \cdot t_{\text{ՍԹԱ}k} \right) \cdot 10^{-6}, \text{ տ/տարի}$$

| Շինմեքենաների անվանացանկ | Քանակը | Մեկ մեքենայի միջին աշխատաժամանակը | | | | | | | Աշխատանքային օրերի թիվը | Միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Օր/ժ | | | | 30ր/ր | | | | |
| | | ընդամենը | չծանրաբեռնված | ծանրաբեռնված | Ազատ ընթացք | չծանրաբեռնված | ծանրաբեռնված | Ազատ ընթացք | | |
| Աշտարակային կռունկ | 1 (1) | 1 | 0,433 | 0,5 | 0, 333 | 12 | 13 | 5 | 95 | + |
| Ավտովերամբարձ կռունկ | 1 (1) | 1 | 0,433 | 0,5 | 0, 333 | 12 | 13 | 5 | 95 | + |
| Բեռնատար ինքնաթափ | 1 (3) | 3 | 2,4 | 2,6 | 1 | 12 | 13 | 5 | 320 | - |
| Բեռնատար ավտոբետոնախառնիչ | 1 (1) | 2 | 2,4 | 2,8 | 1 | 12 | 13 | 5 | 320 | + |
| Էքսկավատոր | 1 (1) | 4 | 2,875 | 3,2 | 1,3 | 12 | 13 | 5 | 110 | + |
| բուլդոզեր | 1 (1) | 3 | 1,2333 | 1,6 | 0,6667 | 13 | 13 | 5 | 250 | - |
| կոմպրեսոր | 1 (1) | 1 | 0,2333 | 0,4 | 0,16667 | 13 | 12 | 5 | 110 | - |
| ջրի մեքենա | 1 (2) | 2 | 2 | 2,16667 | 0,83333 | 12 | 13 | 5 | 90 | + |

| Աղտոտող նյութի անվանումը | i-րդ նյութի արտանետման ծավալը միաժամանակ աշխատող առավելագույն թվով մեքենաներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է համաձայն $G_i = \sum_{k=1}^{k} (m_{ՍԹԱi} \cdot t_{ՍԹԱ} + 1,3 \cdot m_{ՍԹԱik} \cdot t_{ՍԹԱk}) \cdot N_k / 1800,$ բանաձևի, իսկ ընդհանուր գ/վրկ |
|---|---|
| Ածխածնի օքսիդ | 0,00362 |
| Ածխաջրածիններ | 0,003214 |
| Ազոտի օքսիդներ | 0,00409 |
| Ծծմբի երկօքսիդ | 0,00204 |
| Մուր | 0,00278 |

Աղյուսակ 5.

Դիզելային շարժիչներից արտանետվող նյութի ընդհանուր ծավալը ըստ յուրաքանրյուր աղտոտող նյութի և ըստ աշխատող մեքենայի-ն տար վերև

Ամրակցման աշխատանքների ժամանակ օգտագործվող նյութերի և ներկայնյութերի համար հաշվարկն իրականացվում է համաձայն հետևյալ բանաձևի.

$П = 10^{-3} \cdot mk \cdot (δa / 100) \cdot (1 - fp / 100) \cdot K$, տ/տարի

Որտեղ,

mk – օգտագործվող ներկանյութի քանակն է, կգ

δa – ներկի բաժնեմասն է, որը կորում է աէրոզոլի տեսքով, %;

fp -լուծիչ, %;

K – աէրոզոլի տեսքով ներկանյութի նստեցման գործակիցն է,

$П_1 = 10^{-3} \cdot mk \cdot fp \cdot δ'p / 10^4$, տ/տարի

Որտեղ,

fp - նյութի օքսիդացման չափաբաժինն է

δ՛p – լուծիչի գոլորշիացման մասնաբաժինն է, որն առաջանում չորանալուց:

Յետևաբար ամրակացման աշխատանքների ժամանակ արտանետվող նյութերի քանակն ըստ տեսակի որոշվում է հետևյալ բանաձևով.

$$G = \frac{П' \cdot 10^6}{n \cdot t \cdot 3600}, \text{ գ/վրկ}$$

որտեղ,

Ո՛ - ամրակցման ընթացքում օգտագործվող նյութերի բաժնեմասն է, մեկ ամիս անընդմեջ աշխատելու պարագայում
n – մեկ ամսվա կտրվածքով օգտագործվող նյութերով աշխատելու անընդմեջ օրերի քանակն է
t – օրվա մեջ ներկանյութ օգտագործելու միջին ժամային քանակն է:
Այսպիսով,
$П = 10^{-3} * 20{,}05*(30/100)*(1-45/100)*1 = 0.003308$տ/տարի
$G = 0{,}003308*10^{6}/(10*6*3600) = 0.015316$ գ/վրկ
$П = 0{,}003308 \cdot 1 = 0{,}003308$ տ/տարի
$G = 0{,}015316 \cdot 1 = 0{,}0015316$ գ/վրկ
$П = 10^{-3} \cdot 20{,}05 \cdot (45 \cdot 25 / 10^{4}) = 0{,}002256$ տ/տարի
$П_1 = 10^{-3} \cdot 20{,}05 \cdot (45 \cdot 75 / 10^{4}) = 0{,}006767$ տ/տարի
$П = 0{,}002256 + 0{,}006767 = 0{,}009023$ տ/տարի
$П = 0{,}009023 \cdot 0{,}5 = 0{,}004511$ տ/տարի
$G = 0{,}002256 \cdot 0{,}5 = 0{,}001128$
Այսպիսով, արտանետվող նյութերի տեսակային և քանակական տվյալները ներկայացվում են Աղյուսակ 7-ում

Աղյուսակ 7.

| Աղտոտող նյութի անվանումը | Առավելագույն արտանետում գ/վրկ | Տարեկան արտանետում տ/տ |
|---|---|---|
| Դիմեթիլբենզոլ | 0,001128 | 0,004511 |
| Կախյալ մասնիկներ | 0,0015316 | 0,002256 |

**Իրականացնելով շինարարության ժամանակ աղտոտող նյութերի սահմանայինթույլատրելի արտանետման ծավալների հաշվարկները, ներկայացնենք Աղյուսակ 8-ի տեսքով դրանց ամբողջական վերլուծությունը և նկարագիրը**

**Աղյուսակ 8.**

| Շինարարական աշխատանքների փուլերը | Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, գ/վրկ | ժամանակահատված) | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անօրգանական փոշի 70-20% SiO2 | Անօրգանական փոշի > 70 SiO2 | Ածխածնի օքսիդ | Ածխաջրածիններ (CH) | Ազոտի օքսիդներ | Ծծմբի երկօքսիդ | Մուր | ոմեթիլբեն զոլ | ախյալ մասնիկներ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | | 6 | | |
| Շինտեխնիկայի տեղաշարժ՝ այդ թվում նաև շխնաղբի տեղափոխում | 0,0396 | - | - | - | - | - | - | | |
| Փորման աշխատանքներ | 0,003 | - | - | - | - | - | - | | |
| Բեռնման – բեռնաթափման՝ այդ թվում շենքի վերակառուցման աշխատանքներ | - | 0,000945 | - | - | - | - | - | | |
| Դիզելային շարժիչից առաջացող արտանետումներ | - | - | 0,00362 | 0,003214 | 0,00409 | 0,00204 | 0,00278 | | |
| Ամրակցման աշխատանքներից արտանետումներ | - | - | - | - | - | - | - | 001128 | 0015316 |

Կառուցապատման ժամանակ արտանետվող նյութերը գտնվում են թույլատրելի սահմանային նորերում, իսկ շինարարությունը կրելու է ժամանակավոր բնույթ, ուստի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նույնպես:

**8.2 Հողային ռեսուրսներ.**

Գործունեության ենթակա տարածքի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարարակական կառուցապատման: Համաձայն կատարված ուսումնասիրության՝ տարածքում առաջին շերտը կավաավազ մուգ շագանակագույն, կարմրագույն երանգի, խոնավ, կիսապինդ տեղ–տեղ կավաավազային ենթաշերտերով, կոպիճի պարունակությամբ գրունտ է:

Համաձայն նախագծային լուծումների՝ նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է 300մ$^3$ ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է ներտարածքային ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հողային զանգվածի ավելցուկ չի նախատեսվում, քանի որ այն օգտագործվելու է տարծքի հարթեցման նպատակով:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի նախատեսվում, ելնելով գործունեության բնույթից:

**8.3 Ջրային ռեսուրսներ.**

Համաձայն «ԳԵՈՌԻՍԿ գիտահետազոտական ընկերություն» ՓԲԸ-ի կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության՝ նախատեսվող գործունեության տեղամասում մինչև 10մ խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի դրանք գտնվում են 10 մետրից խորը հորիզոններում:

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ուստի մակերևութային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը ջրային ռեսուրսներ:

Շահագործման փուլում ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չկա, քանի որ կից գտնվող ջրային ռեսուրսները բացկայում են:

**Շահագործման փուլում** ջրամատակարարման համակարգը միացվելու է 450մ հեռավորության վրա գտնվող ջրագծից՝ 100մմ տրամագծի խողովակով: Բնակավայրում բացակայում է կոյուղատարը, ուստի ջրահեռացման համակարգի համար նախատեսվում է կառուցել 2*2.2*2.2 չափերի սեպտիկ հոր՝ հողային, ջրային ռեսուրսների մեջ կեղտաջրերի հնարավոր ներթափանցումը կանխելու նպատակով:

Հորի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կամակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Մաքրման հաճախականությունը կախված է հորի լցվածությունից, որը վերահսկվում է դիտահորի միջոցով:

Սեպտիկ հորի շահագործման արդյունքում առաջանալու է տիղմ՝ տարեկան 8-10կգ քանակով: Մաքրված տիղմը տեղափոխվելու է աղբավայր՝ մասնագիտացված

կամակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

### 8.4 Կենսաբազմազանություն

**Բուսական աշխարհ**. նախատեսվող գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, երկար տարիներ օգտագործվել է որպես բաց պահեստ: Տարածքը գրունտային է, ծառերը բացակայում են:

**Կենդանական աշխարհ.** գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է արդեն կառուցապատված տարածքում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում:

**91200601 01 00 4 Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ**

### 8.5 Թափոններ.

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի) (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 2400 կգ/տարի, շահագործման փուլում՝ 14400կգ/տարի:
- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 300 մ$^3$:

Շինարարության փուլում առաջանալու են նաև 75մ$^3$ ծավալով այլ թափոններ/շինարարական աղբի տեսքով/ մասնավորապես՝

- յուղոտված լաթեր(ծածկագիրը՝ 58200600 01 01 4)՝ 4կգ:
- Յուղերով աղտոտված ավազ(յուղի պարունակությունը-15%-ից ցածր՝ (ծածկագիրը 31402303 01 03 4)՝ 5կգ:
- Կտորների տեսքով ասֆալտբետոնի և ասֆալտբետոնե խառնուրդներ (4-րդ դաս ( ծածկագիր՝ 31403502 01 00 4)՝ 17մ$^3$ քանակով:
- Ներկեր/ Լաքա-ներկանյութերի այլ թափոններ ( ծածկագիր՝ 55502900 01 01 4) 2կգ:
- Կարծրացած սոսնձի թափոններ (ծածկագիրը՝55700600 01 01 4)՝ 2կգ:
- Կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ ծածկագիր՝ 35131200 01 99 5)՝ 15մ$^3$, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար տարբեր պարունակության՝ (ծածկագիր՝ 3531030501013)՝ 15մ$^3$, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված ալյումինե հաղորդալար (ծածկագիր՝ 35310105 01 99 5) 15մ$^3$ :

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝

ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 և 5-րդ դասերին: Այս թափոնները տեսակավորվելու են և կոտակվելու են առանձին վայրերում և տարաներում՝ մինչև համապատասխան մասնագիտական կազմակերպություններին հանձնելը:

Վտանգավոր թափոնները լիցենզավորման ենթակա գործունեություն են համաձայն՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, ուստի վերջիններիս գործածությունը պետք է իրականացվի համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

Միաժամանակ Թափոնների փաստացի քանակների հաշվառումը կկատարվի ՀՀ կառավարության 14.09.2006թ. N1343-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ թափոնների փաստացի ծավալների հիման վրա:

Թափոնների տեղափոխումը կատարվելու է Մեծամոր համայնքապետարանի կողմից համաձայնեցված աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով:

**Կենցաղային աղբի հաշվարկները**

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի քանակը մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ
n – աշխատողների թիվն է.

M=10*120= 1 200կգ/տ կամ 3.7կգ/օր

Շինարարությունը տևելու է 2 տարի, հետևաբար

M=1200*2= 2400կգ/տ (648 աշխատանքային օր)

Շահագործման փուլում կենցաղային աղբի առավելագույն ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով աշխատողների առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ 40 մարդ: Շահագործման փուլում կենցաղային աղբի քանակը կկազմի.

M=40*360= 14400գգ/տարի կամ 40կգ/օր:

Թափոնների կառավարման համար հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

## 8.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Գործունեության ենթակա և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Նորապատ գյուղի մշակութային հուշարձանների, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքների հետ, ուստի հնարավոր ազդեցություններ վերջիններիս վրա չի նախատեսվում: Գործունեությունն իրականացվելու են արդեն կառուցապատված տարածքում, ուստի առանձին ուսումնասիրության աշխատանքներ չեն նախատեսվում:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝

համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

**8.7 Աղմուկ և թրթռում.**

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Իսկ թրթռումների մակարդակը սահմանվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2006թ. մայիսի 17-ի N533-Ն որոշման նորմերով: Բնակավայրերի և հասարակական հարակից տարածքների համար աղմուկի առավելագույն մակարդակը սահմանվել է 60-70դԲԱ, իսկ ձայնի համարժեք մակարդակները LաէԿՎ 45-55դԲԱ:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում պատմոնտաժման աշխատանքներն ապահովող շինտեխնիկան, մասնավորապես էքսկավատորը, որը կրելու է ժամանակավոր բնույթ: Էքսկավատորն աշխատելու է 10 ամիս աղմուկի մակարդակը՝ Laէկվ, կազմում է 85 դԲ: Գլդոնը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 6 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 80 դԲ: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝≤ 200կգ/մ2: Շինության պատերը ևս հանդիսանում են միաժամանակյա աղմուկից պաշպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

Iաղ = 23 lg mէ – 10 դԲ, երբ m ≥ 200 կգ/մ2

Iաղ = 13 lg mէ – 13 դԲ, երբ m ≤ 200 կգ/մ2

Որտեղ m = Km – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ2,

K –գործակից է , որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը

200կգ/մ2 K=1,3

M = 1,3 x 200=260

Lաղ = 13lg mէ -13 = 18,2 դԲ

Շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

LAտար = LAէկվ - Lաղ = 85– 18,2 = 66,8 դԲ

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը RԱտր ըստ աղուսյակ 16-ի՝ կազմում է միջինը 50 դԲ:

LAտար = 66,8 – 50 = 16,8 դԲ

Գլդոնի համար՝

LAտար = LAէկվ - Lաղ = 80– 18,2 -50 = 11,8 դԲ

Մոտակա բնակելի շինությանների ներսում աղմուկի մակարդակն էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքներն իրակացվելու են միայն ցերեկային ժամերին:

Աղմուկից պաշտպանվող շերտեր են ծառայում պատերը, ցանկապատը, երկշերտ պատուհանները կանաչ տարածքները: Շինարարության հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի գումարային, ինչպես նաև թրթռման մակարդակի ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Քանի որ աղմուկ առաջացնող մեխանիզմներն աշխատելու են ոչ միաժամանակ, դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր, ուստի աղմուկի մակարդակը կլինի նորմեր սահմաններում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին, տրանսպորտի շարժական ակտիվ գոտում, հետևաբար շինհրապարակում աշխատող մեխանիզմների աղմուկը կտարալուծվի ընդհանուր աղմուկի մեջ: Բացի այդ շինարարակաան աշխատանքները կատարվելու են ցանկապատված տարածքում, որը ևս կմեղմի աղմուկի և թրթռումների մակարդակը:

Չաշվի առնելով աղմուկ առաջացնող շինարարական տեխնիկայի աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են միջոցառումներ:

Շահագործման փուլում աղմուկի և թևթռումների ազդեցություն չի նախատեսվում, ելնելով գործունեության բնույթից:

**8.8 Արտակարգ իրավիճակներ.**

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում կապված՝

- բնական աղետների,
- սողանքների, հրդեհների,
- հեղուկ նյութերի արտահոսքի
- շահագործվող շինտեխնիկայի վթարների հետ:

Գործունեության ընթացքում պարտադիր է. կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննում իրականացումը և եզրակացության տրամադրումը:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների ռիսկը կապված է շինությունում և տարածքում հրդեհների, բնական աղետների առաջացման հետ:

Արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապիպանական միջոցառումներ:

**8.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն.**

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ:

Հնարավոր ազդեցություններից խուսափելու համար շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆևԿ-3-480* նորմերի:

Շահագործման փուլում մարդկանց առողջության վրա բացասական ազդեցություն չի ունենալու:

**8.11 Սոցիալական.**

Շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Նախատեսվող աշխատողների առավելագույն քանակը շինհրապարում կազմելու է 10 մարդ, որից ճարտարագիտա-տեխնիկական անձնակազմ՝ 3 մարդ, բանվորներ՝ 7 մարդ:

Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով:

Շինարարության ընթացքում առաջանալու են հարակից տարածքի բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգի խախտում չի նախատեսվում:

**8.12 Լանդշաֆտ.**

Գործունեության իրականացումը առաջացնելու է լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, սակայն իր ցածրահարկության պատճառով այն լինելու է աննշան : Նախատեսվող գործունեության իրականցման տարածքներում (ազդեցության գոտում) լանշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ:

**9.13 Բարեկարգում և Կանաչապատում.**

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 500մ$^2$ մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ՝ գազոնի տեսքով: Ոռոգումը նախատեսվում է իրականացնել ջրցան մեքենայիվ, երեք օրը մեկ անգամ հաճախականությամբ երեկոյան ժամերին:

Կանաչապատման նպատակով օգտագործվող բուսահողը, տարածքի բուսահողի չբավարարելու դեպքում, ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով:

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն, այսինքն, 1մ$^2$ ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0,3-0,4լ ջուր, հետևաբար.

$$W = (M \times 0,4) \times m$$

Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի,

m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից,

հետևաբար,

W = 500*0,4*40= 8000լ/ջուր կամ 8մ$^3$/տարի ջուր (տարվա կտրվածքով):




## 9. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան)

Ներկայացված հաշվետվությամբ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ՝ բնապահպանական կառավարման պլան, որոնց ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա

միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

**9.1 Օդային ավազան** արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթերով,
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,
- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:
- ցանկապատել շինարարական հրապարակը, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,
- բացառել տարածքում թափոնների բաց այրումը,
- բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող սարքավորումների, տրանսպորտային միջոցների օգտագործումը:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

**9.2 Հողային ռեուրսներ**.Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինհրապարակն ապահովված է կլինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,
- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,

- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է բետոն կամ մանրախիճ,

- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով:

**9.3 Ջրային ռեսուրսներ.** Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների  վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,

- շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող բիոզուգարան,

- ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի *ջուր,*

-տեխնիկական ջուրը կմատակարարվի ՋԹ լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, որը կկնքվի շինարարության սկզբում՝ Կապալառու կազմակերպությունը,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը  բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,

-բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար:

**Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում  է.**

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում  տեղադրվող սանհանգույցից՝  բիոզուգարանից,

- բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

-շինաշխատանքների ավարտից հետո բիոզուգարանը ապամոնտաժվելու են և տեղափոխվելու  են Կապալառու կազմակերպության կողմից:

**Շահագործման փուլում** ջրամատակարարման համակարգը միացվելու է համայնքային  ջրատարին: Իսկ ջրահեռացման համակարգը՝  ջրահեռացման  հորին:

Սեպտիկ հորի մաքրումը կաատրվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Մաքրման հաճախականությունը կախված է լինելու հորի լցվածությունից, որը վերահսկվելու է դիտահորի միջոցով:

**9.4 Կենսաբազմազանություն.** Գործունեության իրականացումը շրջակա

միջավայրի կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցություն չի ունենալու, այնուամենայնիվ նախատեսվում են որոշակի միջացառումներ.

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը տեղեկացնելու է համապատասխան պատասխանատու գերատեսչություններին,

- աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:

**9.5 Թափոններ.** Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահել թափոնների կուտակումներից,

- շին հրապարակի տարածքում կիստակեցվի շին աղբի նախնական կուտակման վայրը,

- շինարարական թափոնները՝ ասֆալտբետոնի և ասֆալտբետոնե խառնուրդներ, պարկեր, մեքենաների տակ փռվող ավազի կամ խճի մնավորդները կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,

- մետաղական մասերն կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- յուղոտված կաթերը կկուտակվեն առանձին տարաներում և կհանձնվեն մասնագիտական ընկերություններին այրման միջոցով ոչնչացնելու համար,

- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 1 հատ պլաստմասե աղբահավաք տարրողության մեջ,

- կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

- բացառել աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ կից ճանապարհների, բնակելի և հասարակական շենքերի տարածքներում,

- շինարարական աշխատանքների ավարտից հետո նյութերը/սոսինձի, ներկի մնացորդներ/ և այլն հավաքվելու են հատուկ տարրողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

**Շահագործման** փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 3 հատ 1,5x1մ$^3$ տարրողության պլաստմասե աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ: Կենցաղային աղբի տեղափոխումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով:

**9.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.** Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և

մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

**9.7 Աղմուկ և թրթռում.** Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,
- շինարարական աշխատանքներում ներգրավվել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,
- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը շինհրապարակից դուրս տարածքներում,
- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը:

**Շահագործման փուլում** նախատեսվում է.

- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,
- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

**9.8 Արտակարգ իրավիճակներ.** Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- տեղադրել տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:
- շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան,
- շինհրապարակն ապահովել հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,
- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ կմաքրվեն հրդեհավտանգ և պայթունավտանգ թափոններից և աղբից,
- հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

- տեղադրել ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,

- հեղուկ և վտանգավոր նյութերը պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:

**Շահագործման փուլ.** Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է.

- շահագործման փուլում շենքերն ապահովված են լինելու հակահրդեհային կրակմարիչներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակածխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով,

- էլեկտրամատակարարման և ծխահեռացման փականների ավտոմատ անջատիչներով, օդափոխության, հակածխային օդափոխության արտածման համակարգերով,

- ջերմամեկուսիչ, օդափոխիչ, էներգախնայող բազմաթիվ այլ սարքավորումներով,

- պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար:

**9.9 մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն.** Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնաները կցանկապատվեն, ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ,

- ստուգվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրվելու են առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ,

- աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,

- ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել

գործնեության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,

- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,

- տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,

- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս,

- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, կաատրել հոսանքատար մասերի մեկուսացում,

- վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար:

**Շահագործման փուլ.**

**9.10 Սոցիալական**. Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,

- բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները,

- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

**9.11 Լանդշաֆտ**. շինարարության փուլում լանդշֆտի վրա հնարավոր ազդեցությունը մեղմելու նպատակով նախատեսվում է.

-բացառել նախատեսվող տարածքից դուրս կառուցապատման այլ աշխատանները:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարել տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,

- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,

- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

**9.12. Բարեկարգում և կանաչապատում.**

Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում,

- կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կպչողականությունն

ապահովելու նպատակով:

## 10. Մոնիթորինգ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
- տեխնիկական վերահսկողության իրականացում՝ նախագծային անհամապատասխանություններից խուսափելու նպատակով,
- շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի, հակահրդեհային պահանջների՝ ՀՀՇՆ նորմերի համապատասխանության պահպանման հսկողություն,
- համապատասխան պայմանագրերի հիման վրա, թափոնների տեղափոխման վերահսկում,
- կապալառուի կողմից նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացման վերահսկում,
- շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով,
- բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացման վերահսկում,
- կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսվում է տարեկան 250.000 դրամ հատկացում:

## 11.Բողոքների ընթացակարգ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Շինարարական բոլոր տեղամասերում ապահովվելու է պատասխանատու անձանց կոնտակտային տվյալները և անվտանգության պատասխանատուի

անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:

**12**. **Փակման փուլ.** Ելնելով գործունեության բնույթից փակման փուլ չի նախատեսվում:

## 12. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

| | | | | |
|---|---|---|---|---|
| **1** | **Օդային ավազան** | Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.<br>օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,<br>- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,<br>- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,<br>- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,<br>- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ, | **Կապալառու** | **Ձեռնարկող** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | - շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով: <br> - ցանկապատել շինարարական հրապարակը, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով, <br> - շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան, <br> - բացառել տարածքում թափոնների բաց այրումը, <br> - բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող սարքավորումների, տրանսպորտային միջոցների օգտագործումը: <br> Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում: | | |
| **2** | **Հողային ռեսուրսներ** | Հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և թափոնների ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է. <br> - շինարարական աշխատանքների ընթացքում հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, <br> - հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում ՝ | **Կապալառու** | **Ձեռնարկող** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,<br>- շինհրապարակն ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,<br>- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,<br>- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,<br>- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,<br>- մեքենաների անիվների լվացումը կատարվելու է անիվների լվացման սարքի միջոցով: Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչ շինհրապարակից վերջիններիս դուրս գալը: | | |
| **3** | | Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.<br>փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,<br>- շինարարական հոսքաջրերը | **Կապալառու** | **Ձեռնարկող** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող բիոզուգարան,<br>- ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի *ջուր,*<br>-տեխնիկական ջուրը կմատակարարվի ՁԹ լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, որը կկնքվի շինարարության սկզբում՝ Կապալառու կազմակերպությունը,<br>- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,<br>- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,<br>-բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար:<br><br>**Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.**<br>- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից, | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | - բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,<br>-շինաշխատանքների ավարտից հետո բիոզուգարանը ապամոնտաժվելու են և տեղափոխվելու են Կապալառու կազմակերպության կողմից:<br>**Շահագործման փուլում** ջրամատակարարման համակարգը միացվելու է համայնքային ջրատարին: Իսկ ջրահեռացման համակարգը՝ ջրահեռացման հորին:<br>Սեպտիկ հորի մաքրումը կաատրվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Մաքրման հաճախականությունը կախված է լինելու հորի լցվածությունից, որը վերահսկվելու է դիտահորի միջոցով: | | |
| **4** | **Թափոններ** | Թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.<br>- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահել թափոնների կուտակումներից,<br>- շին հրապարակի տարածքում կիստակեցվի շին աղբի նախնական կուտակման վայրը,<br>- շինարարական թափոնները՝ ասֆալտբետոնի և ասֆալտբետոնե խառնուրդներ, պարկեր, մեքենաների տակ փռվող ավազի կամ խճի մնավորդները | **Կապալառու** | **Ձեռնարկող** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | պարկեր, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,<br>- մետաղական մասերն կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,<br>- յուղոտված կաթերը կկուտակվեն առանձին տարաներում և կհանձնվեն մասնագիտական ընկերություններին այրման միջոցով ոչնչացնելու համար,<br>- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 1 հատ պլաստմասե աղբահավաք տարողության մեջ,<br>- կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,<br>- բացառել աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ կից ճանապարհների, բնակելի և հասարակական շենքերի տարածքներում,<br>- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, նյութերը/սոսինձի, ներկի մնացորդներ/ և այլն հավաքվելու են հատուկ տարրողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:<br>**Շահագործման** փուլում կենցաղային | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 3 հատ 1,5x1մ$^3$ տարողության պլաստմասե աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ: Կենցաղային աղբի տեղափոխումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով: | | |
| **5** | **Աղմուկ և թրթռում** | Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.<br>- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,<br>- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,<br>- շինարարական աշխատանքներում ներգրավվել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,<br>- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,<br>- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,<br>- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը շինհրապարակից դուրս տարածքներում,<br>- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,<br>- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը: | **Կապալառու** | **Ձեռնարկող** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | **Շահագործման փուլում** նախատեսվում է. <br>- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում, <br>- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով: | | |
| **6** | **Արտակարգ իրավիճակներ** | Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվելու են. <br>- տեղադրել տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն: <br>- շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, <br>- շինհրապարակն ապահովել հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով, | **Կապալառու** | **Ձեռնարկող** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | - շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ կմաքրվեն հրդեհավտանգ և պայթունավտանգ թափոններից և աղբից,<br>- հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,<br>- տեղադրել ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,<br>- հեղուկ և վտանգավոր նյութերը պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,<br>- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:<br><br>**Շահագործման փուլ.** Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է.<br>- շահագործման փուլում շենքերն ապահոված են լինելու հակահրդեհային կրակմարիչներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակածխային, արտածման համակարգերով, Էվակուացիոն ուղիներով և ելքերով,<br>- էլեկտրամատակարարման և ծխահեռացման փականների ավտոմատ անջատիչներով, օդափոխության, | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հակածխային օդափոխության արտածման համակարգերով,<br>- ջերմամեկուսիչ, օդափոխիչ, էներգախնայող բազմաթիվ այլ սարքավորումներով,<br>- պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար: | | |
| 7 | **Մարդու առողջություն, Աշխատանքի կազմակերպում և աշխատանքի անվտանգություն** | Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.<br>պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնանները կցանկապատվեն, ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,<br>- բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ,<br>- ստուգվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրվելու են առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ, | **Կապալառու** | **Ձեռնարկող** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | - աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,<br>- ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),<br>- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,<br>- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնեության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,<br>- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,<br>- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,<br>- բեռնման-բեռնաթափման | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,<br>- տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,<br>- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 յուքսից ոչ պակաս,<br>- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, կաատրել հոսանքատար մասերի մեկուսացում,<br>- վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար: | | |
| **8** | **Սոցիալական** | Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.<br>- շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,<br>- բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները,<br>- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը | **Կապալառու** | **Ձեռնարկող** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **9** | **Տարածքի բարեկարգում** | Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.<br>- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են և հեռացվելու են տարածքից,<br>-շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից,<br>-կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ: | **Կապալառու** | **Ձեռնարկող** |

## 13.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ

| հհ | Գործողություն | Նվազեցնող միջոցառումներ | Մոնիթորինգի Վայրը | Իրականացման ձևը | Ժամանակամիջոց | Մոնիթորինգ Կատարող/ Վերահսկող |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Շինարարության ընթացքում օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և կեղտաջրերի ներթափանցման բացառելուն ուղղված | - Փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումների, աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների ապահովում, վերահսկում,<br>- կեղտաջրերի հեռացման՝ բիոզուգանի տեղադրման վերահսկում: | Գործունեության ենթակա տարածքում | Ստուգայցեր, գործիքային ստուգումներ<br><br>Տեսողական դիտարկումներ, մասնագետի կողմից ստուգայցեր | Շինարարության փուլում՝ ամենօրյա<br><br>պարբերաբար | Կապալառու<br><br>Ձեռնարկող<br><br>ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճ արակային և այլ համապատա սխան վերահսկողա կան մարմիններ: |
| 2 | **Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն** | -Աշխատողների իրազեկում՝ աշխատանքի անվտանգության և | Գործունեության իրականացման ենթակա տարածքում | Իրազեկումներ և ստուգումներ | Պարբերաբար | Կապալառու |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,<br><br>-շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն,<br><br>-բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝<br><br>-հակահրդեհային պահանջների ապահովում՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան: | | Ստուգայցեր | ամենօրյա ռեժիմով, | Ձեռնարկող<br><br>Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին |
| | Աղմուկ և թրթռում | Աղմուկի և թրթռումների | Գործունեության իրականացման ենթակա տարածքում | ստուգայցեր | Պարբերաբար<br>Աղմկաչափի կիրառում | Ձեռնարկող |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների կատարման ապահովում, | | | | Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին |
| 3 | **Նյութեր** | Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից, | Լիցենզավորված կազմակերպությունների պահեստներ | Մատակարարման ընթացքում | Շինարարության փուլում | Կապալառու Ձեռնարկող |
| 4 | **Թափոն** | Թափոնների կանոնավոր տեղափոխում: | Գործունեության ենթակա տարածքից | համապատասխան պայմանագրերի հիման վրա տեղափոխում | Շինարարության և շահագործման ընթացքում | Կապալառու |
| 5 | **Շինտեխնիկա և տրանսպորտային միջոցներ** | - Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում,<br>- շինարարական տեխնիկայի և տրանսպորտայինն միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղման իրականացում: | Շինհրապարակ<br>շինհրապարակից դուրս | Ստուգայցեր<br>Դիտողական ստուգումներ,<br>մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում: | Շինարարարական աշխատանքների կատարման ընթացքում<br>Պարբերաբար | Կապալառու |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **6** | **Բարեկարգում, Կանաչապատում** | -Վերականգնել և բարեկարգել շրջակա տարածքը: | Գործունեության տարածք | Դիտողական ուսումնասիրությո ւն | Շինարարական աշխատանքների ավարտից հետո: | Ձեռնարկող Համայնք |
| **7** | Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բողոքների արձագանքում | Բողոքների, դիմումների առկայություն | Գործունեության վայր | Դիմումների, արձագանքում | Շինարարության ընթացքում | Կապալառու Ձեռնարկող |

## 15. Հանրային քննարկումներ

Համաձայն ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետոթյան կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշմամբ սահմանված պահանջների՝ կատարվել է հանրային ծանուցում և քննարկումներ՝ Թումնայան համայնքի Լոռուտ վարչական շրջանի վարչական ղեկավարի նստավայրում: Քննարկմանը մասնակցել են գործունեություն իրականացնող ընկերութան, համայնքի ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ: Հանրային քննարկման ընթացքում բարձրացված հարցադրումները և առաջարկությունները ներառվել են հաշվետվությունում: Գործունեության վերաբերյալ առկա է Մեծամոր համայնքապետարանի ավագանու որոշումը, որով նախնական համաձայնություն է տվել գործունեության իրականացմանը: Հավելվածներ 7,8:

Հանրային քննարկման արդյունքում նախագծի վերաբերյալ համայնքը տվել է իր նախնական համաձայնությունը, որն էլ հիմնավորում է նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանությունը Տաշիր համայնքի հեռանկարային զարգացման հիմնադրույթային փաստաթղթերին, հեռանկարային զարգացմանը:

## 15. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

